



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lilly

330

N^o 220.

~~№ 184~~

~~220~~

220


№ 220. Красный Тигр

Красный Тигр

Красный Тигр
A. M. Serebryakov

6

2000



~~WF 194.~~

220₁

2000

ԵՂԲԱՅՐ ԹՈՄԻ ՏԵԱԿԵ

2033

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 6 Ноября 1864 года.

Рукопись

220.

ԵՂԱՔԸՐ ԹՈՒՐ ՏԵՇԻ

330
67

ԳԵՎ ՅԻՒՆ ԱԶԱՐԵՎ



Պատուկերազարդ:

Թարգմանութիւն Գրանսիականից:

(Լոյս ընծայեց Գրավաճառահոյն Տէր-Միքայէլեանի և Ընկերութեան, որ ՚ի Տփխիս:)

ՀԱՅ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.

Բ. Պատկանեանի Տպարանումը.

1865.

1865.




58

Ուափայէլ Պատկանեանի Տպարանումը

По Офицерской улицѣ (напротивъ Демидова сада), № домъ 46.

q (7276-52)

28-329



330-2003

63
2081

ՅԵՐԱԿԱՅՈՒՄՆ ԱՄԵՆ ՀԱՅԻ ՎՐԱՅ ՊՐԱԾ Է ՄՐԲԱ-
ՊԱՆ ԱՊԱՐՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԻՐ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՓԻ,
ՃԵՌԱՆՏՈՒ ԼԻՆԵԼ ԱՊԳԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ Ու յա-
ռաջադիմութեան : Արդէն, վերջապէս, շատերը
սկսել են հասկանալ, որ իրանց բարեկեցութիւնը
ու բարեբաղդութիւնը կապուած է աղգի դրու-
թեան հետ և անմիջապէս կախուած է նրա որ-
պիսութիւնից. ով որ աշխատումէ աղգի համար,
նա աշխատումէ և իրան համար, որի աղգը վա-
յելումէ հարստութիւն ու երջանկութիւն, նոյնը
վայելում են նրա կազմող անդամները, անհատ-
ները և կարելի չէ երևակայել, որ մի մարդ կա-
ռողանար առանձին ապրել աշխարհիս երեսին,
աշխատելով միայն իր անձնական օգտին, և լինել
մի և նոյն ժամանակ երջանիկ ու բաւական իրա-
նից: Այս ճշմարտութիւնը ամենեցուն շատ լաւ
յայտնի է և կարօտ չէ մեր փաստաբանութեան:

Այժմ մեր աղդի մէջ հասկացվել է ընթերցանութեան հարկաւորութիւնը և զարթել է կարդալու ցանկութիւն։ Հարկաւոր է միայն ձեռնտու լինել այդ ցանկութեան, հարկաւոր է տալ աղդին բարոյական կերակուր, ուղղել նրա ընթերցանութեան սէրը ու յարգանքը դէպի բարի և օդտակար նպատակներ, սկարապեցնել նրա խելքը ու միտքը արժանաւոր առարկաներով և այսպէս վերանորոգել մեր աղդի ջարդված ու խորտակված մեքենան։ Մենք շատ բանից զըրկված ենք, անթիւ անհամար բաներ մեզ հարկաւոր են, մեր կենսական գօրութեան մեծ մասը կորցրել ենք, կարելի է ասել, այժմ ոչինչ չունինք։ Սակայն ոչինչ, դեռ ևս մեռած, չենք, դեռ ևս մեր մէջ կեանք կայ, ցանկութիւն կայ յառաջանալու, ուրեմն յոյս էլ կայ մեր ցանկութեան և նպատակն հանելու։ Բայց ե՞րբ և ի՞նչուէս, ի՞նչ ճանապարհով այդ բոլորը կըլինի, քանի՞ դարեր էլ պիտի սպասենք, որ կարողանանք գլուխներս բարձրացնել և ինքնարաւական աչքով նայել ուրիշների վրայ։ Հարկաւոր չէ շտապել, լաւ է ուշ, քան թէ ոչ երթէք։ Բայց եթէ այսպէս անհամբեր ենք և կամենումենք, որ շուտով իրագործին մեր ցանկալի նպատակները, այն ժամանակ կայ միայն մի հնար, մի բան, որ որքան շուտ ձեռք բերվի, այնքան էլ շուտով կըմօտենանք մեր կէտին։ Ի՞նչ է այդ հնարը, ի՞նչ է այդ կենսատու բանը, վերջապէս ի՞նչ պէտք է մեզ . . .

Ուսում, ուսում մեղ պիտոյ է,
Ուսումն է մեր թագաւոր,
Ուսմով միայն կարելի է
Երջանկանալ փառաւոր:
Ուսում, ուսում եւրոպական
Հարկաւոր է մեղ, Հայեր,
Գրեանք, դալրոցք ուղիղ ուսման —
Ահա իմ խրատ և հրաւեր:

Մեր չար բաղդից, մինչև այժմ ոչ թէ մի ու-
սումնարան, այլ և հասարակ երեխայոց համար
դպրոց անդամ չունինք: Եթէ կան մի քանի
ուսումնարանք, եւրոպական ձևով հիմնուած, եթէ
կան մի քանի ուսումնարանք հայոց աղդը լու-
սաւորելու դիտաւորութեամբ առաջ եկած, չը-
լինի՛ որ վստահութիւն ունենանք նոցա վրայ.
Հաւատացնումեմ ձեղ, որ բացի վնասից, մեղ
օգուտ չկայ նոցանից: Այն տեղ հայ մտնողը,
հայ դուրս եկած չէ և կարող էլ չէ դուրս գալ:
Մենք պէտք է ձեռքերս լուանանք այդ տեսակ ու-
սումնարաններից և նոցա արժանի ուսուցիչներից:

Մեր աղդի նորոգութիւնը պէտք է լինի մեր
մէջից և ոչ թէ Փարիզից, Լոնդոնից, այս և այն
անկիւններից փախածների ձեռքով: Այժմեան
լուսաւորիչքը պէտք է նախ և առաջ ունե-
նան իրանց աշքի առաջ աղդը, աղդի դրու-
թիւնը և, Եւրոպայի լուսաւորութիւնը
աղդին տալու ժամանակ, պէտք չէ բոլոր

նրա լոյսը մի անգամից առնեն և բերեն, ասկա
թէ ոչ հետեւանքը վատ, շատ վատ կըլինի և
բերողին և առնողին։ Մեր աղգի տկար տե-
սողութիւնը չի կարող դիմանալ այդ հրաշալի
լոյսի ճառագայթներին։ Նա արդէն ուրիշ ան-
գամներով, ուրիշ զգացողութիւններով տկար,
պէտք է դրկիլի մի ամենահարկաւոր զգացողու-
թիւնից էլ, պէտք է կուրանայ և այնուհետև գլոր-
վի այն անյատակ անդունդը, որ տեղից դուրս
ելանել կարելի է միայն հրաշքների զօրութեամբ։

Ամենայն ձեռնարկութիւն, ամենայն փոփո-
խութիւն, ամենայն նորոգութիւն, պէտք է յար-
մարվի աղգի բնաւորութեան, յատկութեան և
զարգացման աստիճանի հետ։ Ամեն ձեռնարկու-
թեան աղգը պէտք է մասնակից լինի. նրա մաս-
նակցութիւնը կարող է լինել ներգործական կամ
կրաւորական, դրական կամ բացասական կերպով.
բայց ինչ ուզէ լինի, նրա մատը պէտք է լինի այդ
գործի մէջ. և ով որ աղգը զանց առնելով կա-
մեցել է և կամենում է գործ կատարել, երբէք
յաջողութիւն ու յառաջադիմութիւն ունեցած չէ
և ունենալու չէ. նրա գործը միշտ կցկտուր, ժա-
մանակաւոր և անընդունելի է եղած բաղմութեան։
Ուրեմն եթէ մի հարուստ մարդ կամենար այժմ
աղգի համար մի ուսումնարան շնորհ եւրոպակա
ճաշակով և գնար այդ ուսումնարանը շնորհ Ամե-
րիկայի մի անկիւնումը և յանձնէր նրա կառավա-
րութիւնը օտար աղգի ուսումնականաց, որոնք

ոչ հայերէն գիտէին, ոչ հայ ձանաչում էին և
ոչ էլ, կարելի է, ուղումէին ձանաչել. ի՞նչ է
կարծում աղդին օգնուտ կըտար այդ հիմնողը թէ
վնաս։ Այդ օրին են գրեթէ այն ուսումնարանքը,
որոնց վրայ աղդը մեծ համարում և յոյս ունի.
որոնք աղջոյին են կոչում և աղդի համար աղ-
դասէր և պիտանի անդամներ են պատրաս-
տում։ Ո՛չ, ոչ, նոցանից ոչ մինը կարող չէ աղ-
դային կոչուել, ոչ մինի նպատակը աղդասիրու-
թիւն և ուսումնաղդի համար տարածել չէ։ Որքան
նոցանից հեռու կենանք, այնքան մեղ լաւ է, այն-
քան մեղ օգուտ է։ Մեղ համար այն ուսումնարանը
լաւ է, որ հիմնուած է հայի մէջ, հայի պիտոյք-
ներին համեմատ և հայի կարօտը լցուցանող։
Այն ուսումնարանքը յարգելի ու պաշտելի են,
որոնց աշակերտքը հայ մտնումեն և հայ են ելա-
նում։

Եթէ դառնանք ստորին դպրոցներին, որոնց
թիւը անհամեմատ շատ է առաջններից, կը-
տեսնենք դարձեալ մի անբախտութիւն, կ'տես-
նենք դարձեալ մի վրդովական տեսարան։ Մեր
չար բաղդից ուսումը և կրթութիւնը ամփո-
փուած է արեղաների, քահանաների և տիրա-
ցուների ձեռքումը, որոնց դաստիարակութիւնը
ու կրթութեան դաղափարը (ուժալ) պարունակ-
վումէ խարազանի և փալախայի մէջ, որոնց բո-
լոր գիտութիւնը վերջանումէ Աւետարանի և Նա-
րեկի լոկ ընթերցանութեամբ։ Բայց որքան դառն

և յաւալի չէ այս դրութիւնը, այնու ամենայնիւ լաւ է այդ վիճակին ենթարկվել և տղէտ լինելով, հայ լինել, քան թէ կրթուած օտար երկրում և զուրկ հայութիւնից, առաջինին վրայ կարող ենք գոնէ մի փոքր յոյս ունենալ, բայց երկրորդին ոչ մի և ոչ երբէք:

Խսկ գրքերի մասին խօսել ևս աւելորդ է. ամեն մարդ լաւ գիտէ ի՞նչ դրութեան մէջ է մեր գրականութիւնը։ Եթէ տարին երկու օրինաւոր գիրք հրատարակուի — քարը կը ճաքի. տարին տասներկու ամիս անհամ ջաւատապատումներով, Քրիստոսապատումներով, այբենարաններով, սաղմոսներով մեծարում են մեծին էլ պղտիկին էլ։ Մի գիրք չկայ, որ շարժէր և լցուցաներ երեխայի հետաքրքրութիւնը. չեմ ասում մեծի, ըստ որումնա, միանգամայն կորցնելով իր վըստահութիւնը դուրս եկած գրքերի վրայ, հարկաւոր չի համարում ժամանակը այդ դարտակ ու չոր բաներին զոհել։ Կա այն բանը կը կարդայ, որից յոյս ունի մի տեսակ օգուտ ստանալ, բայց ասէք խնդրեմ, ի՞նչ օգուտ վերոյիշած գրքերից, ի՞նչ օգուտ Աղմոսից և Կարեկից, եթէ նա ոչ մի բան չի հասկանում նրանցից. նաև մանաւանդ, նրան հարկադրող էլ չկայ։ Բայց երեխայոց վիճակը բոլորովին ուրիշ է, նոցահինդ տարեկանից արդէն ստիպումեն կարդալ և սովորել վերոյիշած գրքերը. ուղին չուզեն, նոքա պէտք է կրեն այդ ծանր և սննտանելի

շղթաները, որի հետևանքը ամենեցուն քիչ թէ
շատ յայտնի է, — տհաճութիւն դէպի ուսումը,
տհաճութիւն դէպի ուսուցիչները, ծուլութիւն,
բժամութիւն և անհոգութիւն:

Այս բոլոր հանգամանքները ունենալով մեր
առաջ, կարծեմ անտեղի և անօդուտ չի լինիլ
մի երեխայական գրքի հրատարակութիւնը :
Մենք ուրախութեամբ առաջարկումենք ԵՂԲՍՑՐ
ԹՈՄՏ ՏՆՍԿԻ թարգմանութիւնը, երեխայոց հա-
մար պատմած, և յոյս ունինք, որ ընդունելու-
թիւն կ'գտնէ, թէ և խոշոր պակասութիւն-
ները լաւ տեսնում և զգումենք:

ՄԵԽԱԿԻ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՈՅ.

ԵՂԲԱՅՐ ԹՈՄԻ ՏՆԱԿԵԼ

ՀԵՂԲԱՅՐ ՊԱԼՄԵՐ	11	տարեկան:
ՍՈՓԻՍ	12	"
ԵԴՐԻՄՐԴ	10	"
ԹԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ	32	"

ԱՌԱՋԻՆ ԱՌԱԽՈՑ.

— Անձ, մեծ համբաւ, բացագանցեց մի տասն տարեկան տղայ, արագութեամբ բանալով դաստան դուռը, ուր երկու մատաղահաս աղջիկ, փոքր ինչ նրանից մեծ, փութաջանութեամբ պատրաստումէին իրանց դասերը :

— Լսիր, Եղուարդ, ասաց Սովիան, չքարձ- րացնելով աչքերը տետրակի վրայից, եթէ դու դարձեալ կամենումես մեզ ընդմիջել և ...

— Եւ պատմել քո չարութիւնքը, աւելցրեց Հեղինէն, ես նախազգուշացնումեմ քեզ, որ հարկադրուած կը լինենք գանգատել մօրս:

— Անսկատմառ, աւելցրեց Սովիան, դարձնելով գլուխը դէպի Եղուարդի կողմը :

— Բաւական է, բաւական, էլ մի մտածէք իմ չարութիւնների վրայ, այժմ բանը վերաբերվումէ շատ հետաքրքրիչ առարկայի:

— Ճշմարիտ, ասաց Սովիան, որի հետաքրքրութիւնը սկսել էր շարժվիլ:

— Եւ որի համար դուք երկուքդ էլ ինձանից բաւական կը լինէք, ես կարողեմ առաջուց պարծենալ. — Խօսքս «Եղբայր Թումի» վրայ է:

— Եղբայր Թումի տնակի, բացադանչեցին երկու մատաղահամ աղջկերքը :

— Եյ՛, մայրս ասաց ինձ, որ նա վերջապէս ստացել է այդ գեղեցիկ գիրքը, որի վրայ ամենեքեան խօսումեն և որ փափագումեն կարդալ:

— Եյ՛ նոր համբաւի համար, Եղուարդ, ասացին միաբերան երկու քոյթը, դու արժանի ես, որ մենք գրկախառնենք քեզ:

‘Եղն վայրկեանին մտաւ Տիկին Պալմերը :

— Հատ լաւ է, զաւակներս, ես շատ ուրախ եմ, որ դուք միշտ սիրով էք :

— Ո՛, մայր, ասաց Սովիան, Եղուարդը այս բոպէիս յայտնեց մեզ, որ դու ստացել ես Եղբայր Թումի Տնակը, Տիկին Ստովէի շարադրութիւնը:

— Եւ բերել եմ այդ գիրքը հետս, սիրելի զաւակներս, որ խօսյն ես սկսենք կարդալ: Սակայն, առաջ ես ձեզ կը կարդամ այն նամակը, որ այդ բարեսիրտ և խելացի Տիկինը գրել էր

իր ձեռքով բոլոր Անդլիացի և Ամերիկացի երեխայոց :

— Ո՞Շ, կարդիր մեզ այդ նամակը, սիրելի մայր, բացագանչեցին շտապելով Եղուարդը և նորա քոյրերը :

— Եհա լսեցէք :

» Ամերելի Անդլիացի և Ամերիկացի երեխայք :
» Խմ բարեկամներիցս մինը աշխատեց յարմարեցնել ձեր մատաղ հասակին համար «Եղբայր Թոմի Տնակ» վերնագրով գիրքը, և խնդրեց ինձանից ասել ձեզ մի քանի խօսք այդ տնակի վրայ, յառաջաբանութեան տեղ :

» Ե՞ս ձեզ կը պատմեմ ինչպէս այդ գիրքը լցուածաւ :

» Հատ առաջ սրանից, երբ ոչ մի խօսք չէր գրած Եղբայր Թոմի Տնակի վրայ, այդ գէպքը պատմած էր մի երեխայոց ժողովի մէջ, և այդ բերանացի պատմութիւնը գրել էր Հեղինակը Ժուղթի վրայ. և այսպէս ահա տեսնումնը, որ Եղբայր Թոմի Տնակը պատկանումէ իրաւաբար երեխայոց :

» Կարագրելով գեղեցիկ և փոքրիկ Եւան, ևս կամեցայ առաջարկել ձեզ մի փոքրիկ քրիստոնեաց աղջկայ սլատկեր : Օրինակ առէք նրանից, բարութեամբ վարուել ձեզ նմանների հետ, մանաւանդ չքաւորների և խոնարհների . օրինակ առէք նրանից միշտ քաղցր խօսել և բարի գործ կատարել ձեր կարողութեան շափ :

»Զեր աչքին Եւան շատ սիրելի կ'երևի, բայց
կար ժամանակ, որ մի երեխայ նրանից աւելի
սիրելի էր. այդ մեր երկնաւոր Փրկիչն էր, որին
ամենքս պաշտումենք, որ երեխայի պէս բարե-
սիրտ և հեղաշամբոյր էր և ամենեւին չէր ապա-
կանված մեղքերի կեղտերով և հասարակ բծե-
րով անգամ։ Այժմ նա նստած է Հօր աջ կողմը,
բայց միշտ յիշումէ, որ ինքն էլ երբեմն եղել էր
երեխայ, իսկ կատարեալ հասակումը ասել էր՝
»Թողէք գալ ինձ մօտ այդ մանուկներին, որով-
հետև երկնքի արքայութիւնը այդպէսների հա-
մար է։« Խրատովելով նրա սէրից և պատուէր-
ներից, Աստուած տայ, դուք էլ ամենքդ լինիք
նրա նման պարկեշտ, հեղ, մաքուր և բարի։

»Ո՛չ, սիրելի մայրիկ, այդ պարագան, որ
վերաբերվումէ երեխայոց ժողովին, մեր սիրով
աւելի վառումէ Եղբայր Թոսի պատմութիւնը լը-
սելու։«

ՏԻԿԻՆ ՊԾԼՄԵՐ. Եղբայր Թոսի Տնակը կար-
դալուց առաջ, ես ձեզ մի քանի խօսք կ'ասեմ
Ամերիկայի վրայ, ուր պատահումեն այս պատ-
մութեան անցքերը։ Ամերիկայի գտնողն 1492
թուականին եղել է Գենուացի ֆրիսափոր կո-
լոմբոսը³, իղաբելլա կաստելացւոյ թագուհու
միջնորդութեամբ, որ համողեց իր ամուսինը,
Ֆերդինանդ Արագոնեանը, օգնութիւն տալու
այդ երեւելի նաւորդին։

»1497 թուականին, մի ֆլորենտիացի Ամերիկ

Վեսպուչի տնունով, Ճանապարհորդութիւն արաւ այն տեղերը և հաստատեց, որ ցամաք երկրի առաջին գտնողը ինքն է եղել, և տուաւ իր անունը աշխարհիս այդ հարուատ մասին, որ երբեմն կոչվում էր «Արևմտեան Հնդկաստան»։ Փենթուկի, ուր մենք գտնում ենք Եղբայր Թոմը, մեր պատմութեան սկզբումը, Վիրուինիայի հրապատակ նահանգ է, արևելքից 05իօ գետով պատաճ։ Կանադան, որի վրայ նմանակէս կ'խօսենք, մի մեծ գաւառ է Հիւսիսային Ամերիկայի մէջ։ 1604-ին, հարիւր տարի յետոյ այդ երկիրը գտնելուց, Փրանսիացիք սկսան անդադար գաղթել այն տեղ և հաստատել իրանց բնակութիւնը։ Մեծն Հենրիկոս 6-երորդ ուղարկեց այն տեղ խումբ գաղթականների։ Կանադան 1763 թուականին առանձին գաշնադրութեամբ անցաւ Անգլիացւոց ձեռքը։

Այս ասելով ես սկսում եմ Եղբայր Թոմի Տնակի պատմութիւնը։

ԵՊԵՍԵՐ ԹԱՐԻ ՏՆՍԿԸ.

Եղբայր Թոմը բնակում էր Փենթուկի քաղաքում։ Նրա տէրը, պարոն Շելքին, որ շատ աղնուահոգի մարդ էր, պարոքերի տակ ընկնելով, ստիպուեցաւ վաճառել Թոմը այդ պարոքերը վճարելու համար, ինչպէս կ'տեսնենք վերջը։

Եհա Եղբայր Թոմի փայտաշէն տնակը։ Մը

330-2003 (7226-82)

նենք նրա մէջ և տեսնենք ի՞նչ կայ այն տեղ:
Նրա կինը, կլոյէն, ընթրիք է պատրաստում
բարեսիրտ Թոմի համար: Գլուխը ծածկած է
մի խայտարդէտ և արդուկէ անցուցած փակեղով,
որի տակից կոշտ ու բոլորի դէմքը այնպէս փայ-
լումէ, որ համարձակ կարելի է ասել թէ նա
քսումէ իր երեսը սկաքսիմատներու պէս ձուի
ձերմկուցք. երբեմն ուրախութեան բովէներին
կարծես թէ նա ծածկել կամենումէ այն հպար-
տութիւնը, որ սեփական է երևելի խոհարարի
անուն ստացող կնոջ:

Ծնակի մի անկիւնում վառարանի առաջ գրած է
գոյն գոյն ամաններով և սնակներով շարած ծըռ-
մոփկ սեղան, որ իմաց է տալիս հիւրերի գա-
լուստը: Այն սեղանի առաջ նստած է Եղբայր
Թոմը, պլ. Շելսիու կալուածքի ամենալաւ գոր-
ծաւորը և այս պատմութեան դիւցազնը: Քարձ-
րահասակ և գեղեցկակազմ Եղբայր Թոմի դէմքը
աբանոս ծառի պէս սեագոյն է, և նրա երեսի
ազդու գծագրութիւնը վկայումէ հաստատու-
թիւն կամքի և առողջ դատողութիւն, պարզա-
հութութեան հետ միացած: Թէ և շատ պարկեշտ
ու պարզ բնաւորութեամբ մարդ է, բայց ամե-
նայն ինչ նրա մէջ ազդումէ յարգանք դէպի իր
անձը և մեծ վստահութիւն իր բնական արժա-
նաւորութեան վրայ: Տես որպիսի ջանքով Եղ-
բայր Թոմը, սեղանի առաջ նստած, աշխատումէ
այրութենից մի քանի տառեր գծագրել Գէորգ

Երեսի վարժապետի, մի չքնաղ տասնը երեք
տարեկան պատանելիի, օդնականութեամբ:

«Այդպէս չէ, Եզրայր Թում», գանչեց արա-
գապէս տղան, տեսնելով, որ իր ալեռը աշա-
կերտը է-ի ծայրը հակառակ կողմն էր տա-
նում. «Է-ի տեղ դու չ ես գրում»: Պատկառելի
զարմացքով լսելից յետոյ բացատրութիւնքը
մանկահասակ ուսուցչի, որ և իր ասած կանոնի
վրայ օրինակի համար կարդաւ մի քանի է-եր
և է-եր շարեց, Եզրայր Թումը կատարելապէս
ըմբռնելով այդ երկու տառերի գրելու զանա-
զանութիւնը, առաւ իր կոշտ մատերով մատիտը,
որ քիչ առաջ սեղանի վրայ դրել էր, և նորից
համբերութեամբ սկսաւ գրել: Մի քանի հատ
է-եր դրոշմելուց յետոյ ցըսուցած կերպով, ու-
րախ ուրախ գանչեց

— Ի՞նչ կ'ասես, պարոն Գէորգ, այսպէս չ՞:

— Բայց, կլոյէ, ես սաստիկ քաղցած եմ,
սաաց Գէորգը, շուտով կ'եփուի այդ կարկան-
դակները :

— Ո՞չ, պարոն Գէորգ, ասաց կլոյէն, դեռ նոր
սկսումեն կարմրիլ:

«Քիչ ժամանակից յետոյ, Գէորգը սկսաւ Եղ-
բայր Թումի հետ ընթրիք ուտել. իսկ երբ կլո-
յէն, շատ կարկանդակներ եփեց ու միմեանց
վրայ շարեց սիւնակի ձեռով, առաւ իր ծծի աղ-
ջիկը ծնկին վրայ և սկսաւ առաջ նրա քերանը
կռել, յետոյ իրը, այն ինչ շէկ մազերով երկու-

փոքր տղայք, Յովսէփի և Պետրոս անունով, գը-
լորվումէին սեղանի տակ, իրանց կարկանդակները
ուտելով, խաղաղումէին մէկ մէկու, կամ թէ քա-
շումէին իրանց փոքր քրոջ ոտերից: Այդ միջո-
ցին Եղբայր Թոմը նստեցրաւ իր աղջիկը ուսին
վրայ ու սկսաւ պար գալ, այն ինչ Գէորգը,
ուղղելով իր դաշկինակի ծայրը դէսկի նա, շա-
ռաջիւններ էր հանում, իսկ Պետրոսը Յովսէփի
հետ արջի պէս պոռալով վաղվզում և թուշկո-
տում էին նրա շորս կողմը, մինչև որ շնչառակառ
ու բոլորովին յոդնած չգլորվեցան գետնի վրայ:
Վերջապէս կլոյէն համբերութիւնից ելնելով,
ասաց, «Դուք իմ գլուխս տարաք այդ ձեր խա-
զերով ու չարութիւններով, կարծեմ որ ժամա-
նակն է վերջացնելու, բայտ որում այս երեկոյ
ժողով ունենալու ենք:

Եյս ժողովը լինումէր շաբաթէ շաբաթ Եղբայր
Թոմի տնակում: Կլոյէն Խօսքը վերջացնելու
վրայ էր, մինէլ տեսնես տնակը լցուեցաւ պ. Եւլ-
բիու ստրուկներով, որոնց մէջ կային ծեր ծեր
կնամարդիկ ու տղամարդիկ, մատաղահաս աղ-
ջիկներ ու տղաներ: Սոքա առաջ երդեցին ու
յետոյ աղօթք արին, վասն զի շատ սիրումէին
երաժշտութիւն և ունէին իրանցից յօրինած եր-
գեր զանազան օրհնութեանց եղանակներով, զոր-
օրինակ Վեճին Երուսաղէմի և Քանանու, որ միակ
աղատութեան տեղ էր և ուր սաստիկ ցանկա-
նումէին ոտք կոխել:

Այդ երգերը նոքա երգումէին մեծ զգացութեամբ, մէկ քանիսը ծիծաղում, միւսերը արտասուր էին թափում միմեանց ձեռքերը սեղմելով։ Երբ երգասացութիւնը և աղօթքները վերջացան, բարեսիրտ սևերը շտապելով սլատեցին Գէորգի չորս կողմը և աղաչեցին, որ նա մնայ ու նոցա համար մի բան կարդայ։ Գէորգը ընտրեց Յայտնութեան գրքի վերջին գլուխը և կարդացածին չափ մեկնեց, ըստ որում մայրը սովորեցրելէր նրա մասնաւոր խնամքով իր կրօնը։ Կարճ ասել, Գէորգը կատարեց իր վրայ դրած պարտքը այնպէս, որ բոլոր լսողները հաւանեցան ու միաբերան կանչեցին, թէ ճշմարտապէս շատ պարզ է մեկնում և ոչ մի քարոզիչ կարող չէ սրանից լաւ բացատրել։ Այնուհետև Եղբայր Թոմը կարդաց մի քանի աղօթքը պարագանակը կատարելու վեհապահը, ինչպէս նկատեց մի բարեսիրտ ծերունի։ պատճառ որ նրա վասկուկ ու գորովալից սրտից վերանումէին դէպի Աստուած խորին ու սրբազնն զգացմունքներ։

Մինչ դեռ Եղբայր Թոմը աղօթք էր անում, միւս ստրուկները երբեմն երբեմն խառնումէին իրանց ձայները նրանի հետ, որովհետև նոքա հոգևորական գործի մէջ հայրապետի տեղ էին դնում նրա։ Ժողովը տեսեց մինչև խոր գիշեր, վերջապէս ժողովականները բարեաւ մնաւ արին և իւրաքանչիւրը նոցանից ճանապարհ ընկաւ դէպի իր խօճիթը, թողնելով Եղբայր Թոմը

Խորկացած Աստուածաշնչի լնթերցանութեան
մէջ և շրջապատած զաւակներով ու ամուսի-
նով:

Վի թեթև զարկ, որի ձայնը, այնպիսի խոր
գիշեր, լսուեցաւ տնակի պատուհանից, բոլո-
րին դողի մէջ ձգեց: Եւ երբոր նոքա շտապելով
վազեցին դուռը բանալու, հէնց այդ միջոցին
նոցա դիմացը ելաւ Ելիզան, Շելլի տիկնոջ ա-
ղախինը, իր փոքրիկ սիրուն Հվնինառը գրկին:

— Ի՞նչ է, ի՞նչ, գանչեցին միարեւան Եղբայր
Թոմը ու կլոյէն,

— Աչա ինչ, Եղբայր Թոմ և կլոյէ, պատաս-
խանեց Ելիզան, ես երեխաս առած փախչումնեմ,
պատճառ որ տէրս նրա վաճառեց:

— Կը վաճառեց, կըկնեցին կին ու մարդ
շվոթոված և ձեռքերը դէպի երկինք բարձրա-
ցնելով:

— Այս, վաճառեց, պատասխանեց Ելիզան,
ես խարիսարելով տիկնոջս սենեակից մտայ խուցը
և լսեցի ինչպէս տէրս պատմումէր իր կնոջ՝ որ
Հենրիկոսի և քեզ, Եղբայր Թոմ, վաճառել է
մի գերեվաճառի:

Այս վերջի խօսքերի վրայ Եղբայր Թոմը ձեռ-
քերը միաւորեց. Նրա աչքերը բացայայտումէին
մի դասն կակիծ ու յուսահատութիւն, և մտա-
ծելով, որ շուտով պէտք է թողնէ իր կինը,
զաւակները և մի անողորմ ու անգութ մարդու-
ձեռքի տակ ընկնի, թուլացած ու դլուխը կուրծ-

քին ծռած ընկաւ հին աթոռի վրայի կլոյն Ելի-
ղայի հետ աղաչելով սպազատելով աշխատումէին
համովել Թոմը փախչելու, բայց նա ասումէր
թէ չի կամենում խարել իր ալ. Շելքին, որ միշտ
վստահութիւն ունեցել էր վրան:

— Ո՛չ, ասումէր նա, տէրս միշտ ինձ կը գտնի
իր կալուածի վրայ, ինչպէս որ նա սովոր էր
միշտ գտնել այն տեղ:

Եւ աղնիւ Թոմը հաւասարի լինելով որ, եթէ
ինքը, ամենալաւ գերին, չվաճառուի, ալ. Շելքին
հարկադրված սկսի լինի վաճառելու միւս մնա-
ցած գերիները, հաստատ մնաց դիտաւորութեան
մէջ չփախչել ի վեաս իր տիրոջ:

Երկու խօսք այժմ Ելիզայի մասին: Միւս օր,
այն զարհուրելի խօսակցութենից յետոյ, որ տեղի
ունեցաւ ալ, և տիկին Շելքու մէջ, սլէտք է
փոքրիկ ու նազելի Հենրիկոսը յափշտակէին նրա
ձեռքից և ծախէին մի գերեվաճառի: Նա դեռ
ևս չորս տարեկան մանուկ էր և երթք մօրից
չէր բաժանուած, ուրեմն ինչպէս կարող էր մայրը
այս աղէտալի յափշտակութեան դիմանալ: Մահը
նրա աշքին հաղար անդամ լաւ էր թվում:
Ուստի իսկոյն միտքը դրաւ փախչել նրա հետ
դէպի աղատ նահանգները, այսինքն դէպի այն
մասը Ամերիկայի, ուր ստրկութիւնը տարածուած
չէր. իսկ այն տեղից անցնել կանադա, որ տեղ
իր և որդու աղատութիւնը ամենելին ապահո-
ված կը լինէր: Ելիզան հաստատ այս դիտաւո-

բութեան մէջ, համարեալ թէ սողալով մօտեցաւ
Հենրիկոսի մահճին: Տղան խաղաղու անոյշքունի
մէջ էր. երկայն ու գանգուր մաղերը ծածանու-
մէին երեսի չորս կողմը, կիսաբաց վարդագոյն
շրթունքների վրայ երբեմն անոյշժալիս էր երե-
ւում, և նրա մանրիկ ու գէրուկ ձեռքերը ան-
հոգ կերպով տարածուած էին վերմակի վրայ:
»Խեղճուկ, գանչեց Ելիզան, քեզ վաճառեցին, բայց
մայրդ ժամանակ ունի դեռ ևս աղատելու « և
կամացուկ զարթեցնելով, շուտ հագցրեց նրա
շորերը և կարողացածին չափ վաղելով նրա հետ,
եկաւ հասաւ ծերուկ թոմի տնակը:

— Ուր ես գնում, մայրիկ, հարցրեց Հենրի-
կը: Մայրը սլատասխանեց.

— Չայն մի՛ հանիր, Հենրիկոս, հարկաւոր
չէ բարձր խօսել. մի չար մարդ եկել է քեզ
մօրիցդ բաժանելու, բայց մայրդ չ'կամեցաւ տալ,
ուստի փախչումէ Հենրիկի հետ, որ այդ չար
մարդը չկարողանայ յափշտակել:

— Այսօր, ասաց Ելիզան, տնակի դրան մօտ
կանգ առնելով, այսօր կէս օրին ամուսինս տե-
սայ, մտիցն էլ անգամ չանցաւ գլխիս գալիքը,
բայց նրա տէրերն էլ այնպէս վատ են վարուել
հետը, որ նա նմանապէս ձգել փախչելու է:
Աշխատեցէք, եթէ կարող էք, յայտնել նրան իմ
փախուստը և սլատառը, և ասէք որ ես կա-
մենումեմ կանադա գնալ: Իմ կողմանէ ողջոյն
մատուցէք նրա և խորհուրդ տուէք... ասաց ու



Մե չար մարդ եկել էր մօրիցդ բաժանելու, բայց մայրդ
չկամնցաւ տալ...

մի վայրկեան երեսը յետ դարձրեց, յետոյ հեծեծանքուլ կրկնեց — խորհուրդ տուէք նմանապէս, ձեռից եկածին չափ բարի լինել, որպէս զի միմեանց գտնենք երկնքումը :

— Այս օր մենք այս տեղ կըկանգնենք, որդիքս, ասաց տիկին Պալմերը գիրքը փակելով :

— Ո՛չ, մայրիկ, հետաքրքրական տեղումը կանգնումենք, ասաց Սովիին հառաջելով :

— Եզդուց կրկին կըսկսենք մեր պատմութիւնը, վրայ բերաւ տիկին Պալմերը ժամունով, և կ'շարունակենք յաջորդաբար մինչև գրքի վերջը :

— Ո՛չ, սիրելի մայրիկ, ինչ երջանկութիւն, գանցեցին միաբերան տղայքը, ուրախութենից թոշկոտելով :

— Ածաշ զանի ըստիցար ուն չափով մամեդայի մի
ամսութ զման բարձրաց ։ սմբից լուգանք
ոչբար ։ Համաշ կառա կառ մինարեն ըլուն ։ այս
։ ցեղաց միջն գալունար զմանեմի մի
ոյս գալունքայից ընս ուս զման ոյ աչ ։
։ Խոյժանի զգայի պահապար միջնա զման ուսիր
զմանքան մախաւենքորե ՍԹԱՒՈՏ ։ ան ա՛ն ։
։ Խոյժանաց զման զման գալունքայից
ուս օնանապար զման զման միջն ընք ։
։ Խոյժանաց պահապար ։ միջն աղջ աղի ուս
։ Տեկին Պալմեր ։ Հեղինեւ ։ Սահիս ։ Եղուարդ ։

ՏԻԿԻՆ ՊԵՐՄԵՐ ԵՐԵԿ ։ սիրելի որդիքս կանգ-
նեցանք այն տեղ ։ Երբ Ելիզան ։ թողնելով Եղ-
բայր Թոմի տնակը ։ փախել էր գերելաձառի
Հալածանքից աղատուելու Համար ։

։ Եղն իսկ վայրկեանին այդ մարդը կարթաւոր
կօշիկ Հագած բարկանալով մտաւ պարոն Շել-
րիու դահլիճը և անբաւական եղանակով ասաց ։

։ Ես մի չարագուշակ լուր ունեմ յայտնելու,
պ. Շելրի ։ աղջիկը իր որդու Հետ փախել է ։

։ Պարոն Հելի ։ կինս նստած է այս տեղ ։
ըոր չոր պատասխանեց Շելրին ։

։ Եկրողութիւն ։ տիկին ։ ասաց Հելին ։ քիթը
կախած ։ վեր ի վերոյ գլուխ տալով ։ բայց այնու
ամենայնիւ կրկնումեմ ։ որ այդ շատ դժնդակ ու
տհաճելի լուր է ։

։ Եստեցէք ։ պարոն ։ ասաց Շելրին ։

— Զէի կարծում, որ հետև այդպիսի խաղ կը խաղաք:

— Ինչ, կանչեց Շելքին, արագութեամբ դառնալով. ինչ կամենումէք ասել դրանով: Իմացէք, որ պատռոյս կոչողին մի կերպ միայն պատասխան ունեմ տալու:

Գերելաձառը այս պատասխանին վրայ վեր թռաւ տեղից և փոքր ինչ կամաց ձայնով նորից սկսաւ.

— Սակայն, փոքր ինչ դառն բան է, ինձպէս բարի մարդուն այդպէս խարել:

— Պատրաստ եմ կարեկից լինել ձեր անբաւականութեան, պարոն Հելի, պատասխանեց Շելքին: Այդ պատճառով ներումեմ ձեր այդ կոպտաբար տունս մտնելը, բայց այնու ամենայնիւ պէտք չէ այդպէս սահմանից դուրս դալ: Գիտցած լինիք, որ այսուհետև ոչ մի տարակուսանք այդ անիրաւ համախոհութեան վրայ չեմ կարող ընդունել: Բայց ինձ բարոյական պարոք եմ համարում օգնել ձեզ աղջիկը դունելու. — աչա ձեր ձեռքն եմ տալիս ձիերս, ծառաներս և ամենայն ինչ, որ կարողէ ձեռնտու լինել դործիդ յաջողութեան: Վերջապէս, Հելի, շարունակեց Շելքին, փոքր ինչ կանգ առնելուց յետոյ, մեղմացնելով խօսակցութեան սառն եղանակը. իմ կարծիքովս այդ նեղութիւններից փոքր ինչ հանգստանալու համար առաւել բարւոք կը լինի, եթէ դուք դաք մեզ հետ նախաձաշելու, յետոյ

կ' մտածենք ինչ հարկաւոր է մեզ անել։ Տիկին
Շելքին բարձրացաւ տեղից, պատճառելով դրադ
մունքները և իր տեղը ուղարկեց մի հաստ խառ-
նածին, սուրբ մատուցանելու համար։

— Ձեր սիրելի Վինը տակաւին ուշ չէ դար-
ձնում ամենախոնարհ ծառայիդ վրայ, ասաց Հե-
լին, անյաջողակ ծածկելով իր ընտանենալու յան-
կութիւնը։

— Ես սովոր չեմ լսել կնոջս վրայ այդպիսի
խօսքեր, ասաց Շելքին ցրտութեամբ։

— Կերողութիւն, ներողութիւն, Շելքի, կա-
տակեմ անում, ասայ Հելին, բռնի բարձրաձայն
ծիծաղելով։

— Ամեն հանաքը հաճոյական չէ, և ունի իր
տեղը, պատասխանեց Շելքին։

— Ո՞ի տեսէք, խնդրեմ, այս փոփոխութիւնը,
մոմուաց Հելին քթի տակից, այժմ որ դաշնա-
գիրները ստորագրած են, հպարտանալ ու քիթը
բարձրացնել սկսել է. ծիծաղաշարժ բան է, հա-
ւատացնում եմ ձեզ։

Շելիզայի փախուատը ոտքի վրայ կանգնեցրեց
Շելքիու կալուածի բոլոր սարուկները։ Սոքա ան-
դադար գնում գալիս էին միմեանց դարնվելով
և աղաղակ բարձրացնելով։ Ամեն կողմից երե-
սանց աշխատումին օդնել Հելիուն նրա հետա-
զոտութեան մէջ. բայց իսկապէս մտադիր էին
ուշացնել գերեվաճառի գնալը։

Ահա ինչ էր խօսում այդ սեւերից մինը.

ուղեկից էր նշանակած չելիուն, դառնալով դէսի
ընկերը, որի հետ միասին կատարելու էր այդ
պաշտօնը:

— Ականջ դիր, Անդի՛, տիկինը կամենում;
ժամանակը երկարացնել, այդ պարզ երեւումք:

— Անկաջ դիր, Անդի՛, վրայ բերաւ նա բարձ-
րացնելով ձայնը և հապատանալով իր երևակայսի-
վերին աստիճանի թափանցողութեամբը. ան-
շուշա տիկինը այդ չէ կամենում: Ուստի երբ
ձիերը կ'արձակենք, լաւ կըլինի եթէ նոցա միան-
դամայն ազատութիւն տանք այս կամ այն կողմը
վաղելու, անտառները, դաշտերը և ձեմելիք-
ները չափելու, ես նոցա արգելք չեմ լինիլ, որպէս
զի Մասսան *) Հարկադրուած լինի սպասել այս
բանի վախճանին, իրաւ չք:

Անդին հեգնաբար ժապտեցաւ:

— Ականջ դիր, Անդի՛, ականջ դիր. դիցոք
թէ քացի է տալիս... Մենք այն ժամանակ կը-
թողնենք մնացած երկու ձին, իրը թէ նրա օգ-
նութեան վաղելու համար, կըլինեց Ասմը ծի-
ծաղելով: Ա՛յս, Ճշմարիտ, ի՞նչ գեղեցիկ օգնու-
թիւն կլինի, Անդի:

Աւ երկու սեւամորթքը գլուխները միմեանց
տուած ցնդումէին մատերով և երկար ու ձիդ
ծիծաղելով կաքաւումէին, թէ և խոհեմութեան
համար պէտք էր լոել:

*) Պարոն:

Այս ծիծաղաշարժ ուրախութեան միջոցում, որին անձնատուր էին նոքա, պարոն Հելին, փոքր ինչ զուարթացած երկու երեք բաժակի համեղ սրճով, երևեցաւ պատշգամբի վրայ ժպիտը երեսին և գրեթէ ուրախ ուրախ խօսելով հիւրընկալի հետ։ Նրա տեսածներուն աէս, Սամը և Անդին, հանելով իրանց գլխից արմաւենու տերեւներէ հիւսած պատկները, որ սովորաբար գլխարկի տեղ էին գործ ածում, վաղեցին նրա ասպանդակի մօտ և կանգնեցան, որպէս զի եթէ հարկաւորի, օդնեն Մասսին։

Դէ, տղայք, կանչեց Հելին, անյապաղ ճանապարհ ընկնենք։

— Մի վայրկեան էլչենք կորցնել, Մասաւ, ասաց Սամը, առաջարկելով նրան ձիու սանձը և բռնելով ասպանդակից, այն ինչ Անդին քակումէր միւս երկու ձին։

Հաղիւ թէ Հելին մօտեցել էր ժամբին, մինէլ տեսնեմ կատաղի կենդանին վեր վեր թռաւ և գլորեց նրան մի քանի քայլ հեռու կակուղու լայնարձակ մարդագետնի վրայ։ Սամը յիշոց տալով վաղեց բռնեց ձիու սանձը, քայց ազեղակի ճառագայթները, որ նա ծածկում էր իւ մաղերով, զարկեց յանկարծ ձիու ոչքերին. այս իրողութիւնից յետոյ ձին աւելի կատաղեցաւ. առաւ ձգեց սորուկին գետնի վրայ, երկու երեք անդամ խրխնջեց և յետոյ ամենայն զօրութեամբ չորս ոտերը դէսի վեր բարձրացնելով սկսաւ դիւ-

մացի դաշտը վագել։ Նրան հետևում էին մօտից
միւս երկու ձիերը, ֆիլը և Ճեռոխն, որոնց ըստ
առաջուայ պայմանին արձակեց Անդին սաստիկ
և զարչութիւնը յիշոցներ կարդալով։

Հատ հեշտ է երեւակայել ինչ աղմուկ բարձ
րացաւ, սրա հետևանքից։ Մինչդեռ Սամը և Ան-
դին կատաղաբար բարկանումէին, ջանալով միա
մեանց գերաղանցել, շները ցիրուցան եղած հա-
ջումէին. իսկ Միկեն, Մովսէսը, Մանդին, Գան-
նին, բոլոր փոքրիկ խափշիկները ու խափշիկու-
հիները վազվղում, թոշկոտում ու ծափ էին դար-
կում մեծ աղաղակներ և գոռդոռոցներ բաձրա-
ցնելով։ Հելլին դիւտհարի նման այս կողմ այն
կողմ նետուելով հայհոյութեր, աղաղակում և
ոտերը գետնին խփում, բայց բոլորը իզուր։
Շելքին պատուհանից սաստիկ աղաղակելով, կար-
ծես թէ մեծ ջերմեռանդութեամբ ուղղումէր հե-
տամոռութեան ընթացքը. իսկ Տիկին Շելքին,
իր խցի պատուհանի առաջը կանդնած, ծիծա-
ղումէր և զարմանում այսափ անօդուտ ջանքին,
թէսլէտ և լսու հասկանումէր բուն պատճառը,
որ ուշացնումէր այդ աղմկաւոր տեսարանի վախ-
ճանը։ Վերջապէս, կէս օրուայ մօտ, Սամը երե-
ւեցաւ յաղթանակով։ Նա Ճեռոխն հեծած բե-
րումէր Հելլիու շնչառալառ ու ասստիր քրտնած
ձին։ Զնայելով կենդանու այս գրութեանը, նրա
կրակուտ աչքերը և ոնդներից դժուս եկած շողին
ցոյց էին տալիս, որ գեռ ևս նրա մէջ շիջած

չէր աղատութեան եռանդը :

— Բռնեցի', բռնեցի', գանչեց Սամը, հպարտ հպարտ հայուածքներ ձգելով աջ ու ձախ: Առանց Սամին, դեռ ոչինչ վերջացած չէր լինէր, բայց ես նրան բռնեցի:

— Դժու, մռմռաց Հելին բարկացած ձայնով, եթէ դու չինէիր, այս բանը ևս չէր հանդիպէր:

— Ասուած մեզ ամենիս օրհնէ, ասաց Սամը ջերմեռանդութեամը, մանաւանդ ինձ, որ քամակից ընկայ, բռնեցի բերի, արիւն քրտինքի մէջ թաղուելով:

— Գնա՛, գնա՛ բանիդ, ասաց Հելին, ահա երեք ժամի չափ կորցնել տուիք ձեր անիծած կատակներով, էլ այդպիսի խաղեր չինի՛:

— Ի՞նչ, Մասսա, ասաց Սամը աղաջական ձայնով, միթէ՞ կամենումէք սպանել մեզ ամենին, ձիերու հետ միասին: Ստրուկները սաստիկ վատակած են, իսկ կենդանիները քրտինքի մէջ լողում. ուստի միթէ կէս օրից առաջ ճանապարհ ընկնելու, ցանկութիւն ունիք. նա՛ մանաւանդ ձեր ձիու վրայ մեծ տիզմ նստած է, սկէտք է մաքրել. Ժեռոխն-էլ կաղումէ, տիկինս էլ ամենեին մեզ այս դրութեան մէջհրաման չի տալ ճանապարհ ընկնելու, վերջապէս ի՞նչ շուապելու բան գայ, խօ՛ Ելիզան մի երևելի վագող կին չէ:

Խսկ տիկին Շելթին, որ հետաքրքրութեամը ակսնջ էր դնում այս անկեղծ խօսակցութեան,

մէջ ընկնելու պատեհ ժամարելով, մօտացաւ Հելլիուն ու քաղաքավարութեամբ կարեկից լինելով այն անակնունելի դիպուածին, խնդրեց ճաշի մնալ, հաւատացնելով, որ իսկոյն սեղանը պատրաստ կըլինի:

Հելլին, թէսլէտ ակամայ կամօք, ընդունեց այս նոր հրաւէրը և մտաւ դահլիճ թթու ու զբաղած դէմքով :

— Տեսար նրա, տեսար նրա, հա, ասաց Սամը երբ ախոռ դարձաւ և ձին սեանը կապեց : Տէր Աստուած, ինչ խարեբայութիւն արինք : Ո՛հ, արժէր նայել ինչպէս պար էր գալիս, ինչպէս թռչլոտում էր ու մեզ հայհոյում : Լաւ, լաւ, ասումեմ մոքումս, էլ հայհոյիր քաւթառ շուն. էլ աղաղակիր չարասիրտ սատանայ : Գու կամենում էիր ձին բռնել, հա, կամ թէ կարելի է ցանկութիւն ունէիր սւերը բռնելու : Ո՛հ, Տէր Աստուած, Տէր Աստուած, այժմ էլ տեսնումեմ նրա կարմիր աչքերը : Տեսար արդեօք դու էլ նրան, Անդի, տեսար թէ ոչ : Սամը Անդիու հետ թեկն տալով պատին սկսան երկար ու ձիգ ծիծաղել խառն ի խոռն ձայներով, որ եղաւ վարձարութիւն նոցա երկարատեւ համբերութեանը :

— Տես, Անդի, շարունակեց Սամը ծանրութեամբ, մաքրելով Հելլիու ձին, թափանցողութիւնը հարկաւոր բանէ, Անդի : Չատ մեծ ձանազանութիւն կայ սւերու մինի և միւսի մէջ, Նայիր,

Անդի, դու էլ սովորի՞ր դիտողութիւն անել, քանի որ կրիտասարդ ես; Ես այս առաջօտ իմացայ տիկնոջն կամքը առանց նրանից մի բան լրսելու; Դիտողութիւնը, Անդի, ինչպէս առումէ տանուտէրս, մի ընդունակութիւն է, որ ամենեցուն հաւասար չէ տրուում, բայց իւրաքանչիւրը մեզանից կարող է մշակել նրա:

— Կարելի է, ասաց Անդին, բայց կարծեմ, որ եմ էլ լաւ օգնեցի քո դիտաւորութեանդ, Սամ, և իմ պարտաւորութիւնն գեղեցիկ կատարեցի:

— Անդի, կրկնեց Սամը խրատական ձևով դու յիմար տղայ չեն. ես գիտեմ ինչ բանի շնորհունես, և պէտք եղած ժամանակը քեզանից խորհուրդ կ'արնեմ. Էշրն էլ կարող է երբեմն ջորուն յետ ձգել: Ինչ ահճէայժմ եկ տուն դարնանք, հաւաստի եմ, որ տիկինս մեզ լաւ պատիւ կ'անէ:

Բայց ժողնենք պարոն Շելքու տունը և համենք խեղճ Ելիղայի յետևից: Ահա նա հեռանումէ փութով իր միակ ասբատանարանից ահա նա տիսուր մտախորհ, գաղտագողի վախչումէ մի բարի տիկնոջ հովանաւորաւթիւնից, որ երբէք պակաս չէր արած նրա վրայից իր գործվալից մարդասիրութիւնը: Ամեն քայլախովին, նա հրաժարական ողջոյն է տալիս մի ծանօթառարկայի: Աստեղաղաղարդ կամարի ցուրտ ու պարզ լուսի տակ, նա կարգաւ ձգումէ իր հայուացքը յարկի վրայ, որի հրվանդաւորութեան.

տակ անցրել էր իր մանկական օրերը, և ծառատունելի — ուր իր երիտասարդ՝ ամուսնու հետ թե թե ի տուած այնքան երջանիկ երեկոներ անցրել էր: Քողով առարկաները, որ նա առա նումէր, պարթեցնում էին նրա հոգու և սրտի մէջ քաղցր յիշատակներ և, կարծես թէ իր փախուստը երեսին զարնելով, հարցանում էին թէ ո՞ր յարկի տակ արդեօք կարող էր աւելի խաղաղ կեանք ունենալ:

Յայց վախենալով մի սարսափելի վահանգից մայրական սէրը, որ համել էր խելագարութեան նուաճեց երկխաղը և բոլոր լիշտերը: Որդին, բաւական մեծ լինելով, կարող էր ոտով մօրը հետ քայլել, բայց իրը խեղճ կնոջ միան էր վաղ լիս, որ երեխան ձեռքից յափշտակելու հն սիրուդով էր բնկնում, և կարծես թէ այդ մտածողութիւնը մօտեցնում էր նրան վասնդը, ուստի սեղմումէր երեխան ամենայն զօրութեամբ իր կուքքին և արագայնումքը շուտաբաց ընթացքը:

Առած գետինը ճամռատումէր վիտսառականի ոտքի տակ, և այդ ձայնը նրան սաստիկ սարսափեցնումէր: Ճանձի բղզալը, թոշունի թոթառը, տերեւի խշխշոյը, ծառերի որդամունքը, մի խօսքով բնութեան բոլոր շնչաւոր ու անշունչ ձայները, արագութեամբ զարնում էին արիւնը սրտին, և նրա քայլերը, որ արգէն բաւականին արագ էին, ևս առաջել արագանում: Որդու ծանրութիւնը նրա աչքին փետուրի, յարդի նման

թեթև էր երեւում և քանի որ սիրտը բարա-
խումէր երկիւղից, կարծես թէ մի գերբնական
զօրութիւն էր ստանում, որ առաջ էր մղում
նրան . իսկ գունաթափ շրժունքից անդադար
լվվումէր այս աղօթքը . «Տէ՛ր օգնէ ինձ, Տէ՛ր
փրկէ ինձ: »

«Եախ և առաջ զարմացըը ու վախը Հենրի-
կոսի քունը փախցրին, բայց նրա մայրը այն-
պիսի ջանքով բռնումէր նրա ամեն մի թեթև
հառաջանքը, ամեն մի նուազ ձայնը, հաւատա-
ցնելով թէ աղատումէ նրա, որ տղան վստահա-
ցած փարեցաւ նրա վզիցը և մի հարց տուաւ
միայն այն ժամանակ, երբ քունը սկսաւ ծան-
րացնել նրա թերթեանուկները: »

— Ասա՞ մայրիկ, կարող եմ քնել:

— Հա՞ սէր իմ, քնիր եթէ կամենումես:

— Բայց, մայրիկ, եթէ քնեմ, չե՞ս թողներ,
որ նա ինձ առնէ տանէ:

— Չէ՛, Աստուծոյ օգնականութեամբ, պա-
տասխանեց մայրը, բոլորովին գունաթափուած,
և նրա մեծ ու սեորակ աչքերը կրակի պէս
փայլեցան:

— Ասածիդ ապահով ես, մայրիկ, ապահով
ես:

— Ո՞չ, շատ ապահով եմ, սիրելիս, ասաց
մայրը, մի այնպիսի ձայնով, որից ինքը սար-
սափեցաւ, որովհետև նրան թվումէր, թէ այդ
մի ներքին յոգու արձագանք էր, որ խօսումէր նրա

Ազ : Եւ տղան բոլորովին լստահացած իր մօր
խօսքերու վրայ, անոյշ քուն մտաւ :

Ո՞հ քանի ժամ քայլելից յետոյ, նոքա հա-
սան մի ժայռապատ կալուած, որի մէջից անցա-
նումէր պայծառ առուակի: Որովհետև տղան այս
տեղ սկսաւ ուտելիք ու խմելիք խնդրել, մայրը
ցանկասպատից միւս կողմը անցնելով, ժաքնուե-
ցաւ մի մեծ քարաժայոի քամակում, որ ծած-
կում էր նրան անցաւորների աչքից, և հանեց
իր աղքատին կապոցից նախաճաշիկը :

Հենրիկը միանդամայն զարմանումէր և տըլս-
րում թէ ինչու համար մայրը ոչինչ չէր ուտում,
և, իր մանկական խնամքովը ձեռքերը նրա վը-
զովը տարած, աշխատումէր բռնի մօրը բերանը
մի կտոր բան դնել. բայց խեղճ կինը կարծումէր,
որ կարկանդակի ամենափոքր փշտանքը անդամ
կարող էր խեղճել իրա :

Այդ կրկնուած փորձերը, Ելիդան անդադար
մերժումէր ասելով. «Չէ, Հենրիկս, չէ՝ դանձ իմ,
մայրիկդ բան չիուտել, մինչև որ քեզ չաղատէ :
«Վեր կաց, ժամանակ է ճանապարհ լնկնելու
մինչև գետը» յաւելցրեց նա :

Այս օրուայ մօտ Ելիդան փոքր ինչ հանգս-
տանալու և ճամփու պաշար դնելու համար կանգ-
առաւ նախ մի փոքրիկ կալուածի մօտ, որի բա-
րեկարգութիւնը ու մաքրութիւնը աչքի դար
կաւ, յետոյ մի մերձակայ փոքրիկ օթևան մտաւ
մի քանի տեղեկութիւնք տոնելու :

Աւոած փքած Օհիօ դետը , ասացին նրա ,
սաստիկ Ճայթմունքով բերումէ ահագին սառուցի
բեկորներ և , ջարդ ու փշուր անելով , ձգումէ
ալիքների երեսին :

— Չկայ արդեօք լապտ , Հարցրեց Ճանապարհ
Հորդուհին աղանդոկապետի կնոջից , Բաւի միւս
կողմը անցնելու :

— Չէ , ասաց կինը , նոքա ոյլ ևս չեն նա-
ւում :

Եյս կայծակնահար մկատասխանին վրայ , Ելի-
զան մօտացաւ սկառուհանին և հազիւ կարողա-
ցաւ աչքը բանալ , մին էլ տեսնես մի ընտանեկան
ձայն , որ նշանացի էր սեւերու մէջ վերահաս վր-
տանդի , եկաւ հասաւ նրա ականջին : Մի ակրն-
թարթում նա Ճանաչեց Սամին , որ իրան ար-
դարացնելու համար , գլխարկը այնպէս հադել
էր , որ քամին իսկոյն թոցրաւ գլխից : Հելին և
Անդին մի քանի քայլ նրանից հետու ձիով վա-
զում էին :

Երբ Ելիզան տեսաւ այս քստմնիւ տեսարանը ,
կարծես հազար ու մի կերանք ամբոփուեցաւ նրա
սրտի մէջ : Մի գաղտնի դուռն հանումէր դէսկի
դետը : Իսկոյն նա առնումէ իր մանուկը , որ
պառկած էր մահճակալի վրայ և , ցնցողական
կերպով սեղմելով նրա իր կուրծքին , փայլակի
արագութեամբ ցած է թուչում սանդուղից : Բայց
երբ նա դետեգերքը հասնելու վրայ է , Հելին
նրան տեսնումէ , ձիուց ցած է թուչում , և որչափ

ձայն ունի , « Ասմ և Անդի » կանչելով , ընկնումէ
որսաշան նման փախատականի յետևից :

Եյս վրդովական վայրկենիս , կարծես թէ Ելին
զայի ոտքերը գետնին չեն կալչում . մի ակնթար-
թում և ահա անդունդի տիկին է կանդնած :
Թշուառ մօր ու երեխային հալածողները մի քանի
քայլ յետ էին մնացել : Մի գերբնական զօրու-
թեամբ , որ Աստուած միայն յուսահատութեան
ժամանակ է տալիս , վայրենի աղաղակ է բարձ-
րացնում Ելիզան և անսովոր արագութեամբ
թոչումէ աղտոր հոսանքի վրայից , որ այն տե-
ղից անցանումէր , և կանգնումէ սառուցի լեծ
բեկորների վրայ , որ գետը տանումէր : Կատա-
ղութիւնը , Խելագարութիւնը միայն կարող էին
այդպիսի դարչուրելի ոստում կատարել : Սամը ,
Անդին և Հելին , ձեռքերը դէպի երկինք կար-
կառած , մի բնաղդողական զօրութեամբ երկիւ-
դալի ձայն արձակեցին :

Կանաչորակ սառուցի բեկորը , որի վրայ թը-
ռաւ Ելիզան , Ճաթուտեցաւ նրա ծանրութենից ,
թէ և նա անդգալի կերպով վրան կոխեց : Վայ-
րենի Ճիչ բարձրացնելով և մի անասելի զօրու-
թեամբ սառոյցէ սառոյց է թոչում ընկնել ելլե-
լով և անդաղար սահելով : Խեղճ կնկայ ոտքի
ամանները կորել էին , գուլպաները հաղար տե-
ղից ծակծկած . բայց նրա աչքին ոչինչ չէ երկ-
ում , նա ոչինչ չէ դգում — մինչև այն աստիճան ,
որ կարծես թէ երազի մէջ լինէր . հասնելով

Օհիոյի Հանդիպակողմը, մինի ձեռքից է բըռ-
նում և նրա օգնականութեամբ անցանումէ այդ
ազատութեան ծովափը :

Տեսակի պահանջման (վրդոված բաձրանալու) Մեր
սույն օրուայ ժողովը վերջացաւ:



Ելիզան վայրենի աղաղակ է բարձրացնում և կանգնում, սառուցի
մեծ բեկորների վրայ, որ գետը տանում, թ:

Հյուսուս Առաքելակը և Կառավարին Յ Քաջազգութեան հմայակի մարմաբ
ու առաջակա պատր ու կադա հոգմանին էն.

Հայոց : Եսքի շաբ սոցի հայութեան և համայնքան վի
պայտաց : Ա անունն այդ մինչեւ ով զնութ առաջ
մայ ան ոգար ով բնակութան անունն այդ մայ
մինչեւ և զնութի առաջապահ Հայութ ով վաճառ
առայ հմատիւնաւ և և որ ճայու ան ուսու նոր ըման
նվազութան ամ ու առանձուայ բար ու ան իւն
ով բայսի ըման : Երբորդ Ստուկօս .

Եւստակինէ :

Տիկին Պալմր .— Հեղինէ .— Սոփիա .— Եղուարդ :

Տիկին Պալմր . Մեր վերջին ժողովումը տե-
սանք մի մօր արիասրութիւնը իր որդին ազա-
տելու համար :

Ուողնենք նրա փոքր ինչ հանգստանալ կրած
դժուարութիւններից ու ամբոխմունքներից և
դառնանք դէպի մեր Եղբայր Թոմը :

— Խեղչ Թոմ, գանչեց Հեղինէն, նա իր որ-
դիքներից և կնոջից բաժանուելու վրայ էր, երբ
մենք նրա թողանք :

— Այդպէս է, պատասխանեց տիկին Պալմերը :

Մենք այսօր կ'մտնենք շոգեշարժ նաւի մէջ ,
որ դանդաղ ի ջանում է լայնածաւալ Միսիաիրի
վրայով : Տախտակամածի վրայ խոնվումէ զանա-
զան վիճակի ձանապարհորդների բազմութիւն ,
որոնց մէջ ի զուր պէտք է որոնէինք մեր նուաստ
բարեկամը : Վերջապէս մենք նրա տեսնում ենք

մի անկիւնում բեռների վրայ գուճ եկած։ Որով-
հետեւ թումը իր համբերութեամբ ու քաղցր
բնաւորութեամբ կարողացել էր փոքր ինչ կակ-
ղացնել իր տիրոջ խստասրտութիւնը և մինչեւ
անդամ ազգել նրան որ և է աստիճանի վստա-
հութիւն, այդ պատճառաւ ևս նա հաւատարիմ
էր համարվում, այսինքն, ազատաբար կարող էր
մանդալ շոգենաւի մէջ։ Միշտ հանդարտ ու
մարդասէր, նա անդադար օդնումէր նաւաստի-
ներուն և գործաւորներուն նոյն խոկ եռանդով,
որ փոքր ինչ առաջ ցոյց էր տալիս նա Քեն-
թուկիում, իր տիրոջ կալուածքի վրայ։ Ազա-
տութեան վայրկեաններին, նա ելանումէր տախ-
տակամածի վրայ և գուճ եկած անկիւնում, ուր
որ մենք գտանք նրան, իրան շատ բազդաւոր
էր համարում, չնայելով կրած դժուարութեանց,
եթէ կարողանումէր Աստուածաշունչը կապելով
կարդալ։

Արդարե, սուրբ գիրքը կամաց կամաց կար-
դալով ամեննեին չէ կորցնում իր արժանաւորու-
թիւնը, ընդհակառակն, ամեն մի խօսք արծա-
թեայ թիթեղի նման պէտք է առանձին առան-
ձին կշռուի, որ մարդու խելքը կարողանայ գը-
նահատել նրա բոլոր արժողութիւնը։ Նաւորդ-
— Ու գուք լաւ հոգս տանիք նրա կրթութեան վրայ, գուղեն, ժաղելով ասաց նա: Ես ձեզ լաւ դիտեմ, աւելցրեց ծանրութեամբ, դուք կարող էք նրան բարի ճանապարհ ձգել:

Թոփախն շուտով մի նշանաւոր և հետաքրքրիք անձն եղաւ: Աէն-Քլէրի ընտանիքի մէջ: Մի օտարաբատի ձգտաղութիւն դրդումէր նրան զանազան ձեռնածութիւններ և ծիծագաշարժ խեղկատակութիւններ անելու: Ես կարող էք կարգարար կագաւել, թոշիոտել, երգել, սուլել և արձակել ամենատեսակ հնչմանքներ: Ազատ ժամերում, տան բոլոր տղացքը միշտ նոր հետաքրքրութեամբ և զուարձութեամբ գնումէին նրայետեց: Եւան ևս Թոփախու հաղար տեսակ կազիութիւններից և ծիծագաշարժ գործերից յափշտակուելով, զմայլացած և բերանը բա-

կանգնումէր երբեմն նրա առաջ : Բայց թոփսին,
լինելով սիրելի երեխայոց, մի և նոյն ժամանակ
դարձել էր տհաճելի և զգուելի առարկայ գլխա-
ւոր ծառաներին : Շատ շուտ նրա դէմ դաշն
կտալուեցաւ . բայց մի՝ տիսրէք և մի՝ վախենաք,
ինչու որ փոքրիկ խափշիկուչին միջոց ու իրա-
ւունք ունի նոցանից ծածուկ վրէժ առնելու :
Այն ինչ մինը գանգատ կ'անէր նրա վրայ կամ
կըմեղադրէր այս կամ այն բանը կոտրելու, փշա-
ցնելու կամ պատառելու համար, մէկ էլ տես-
նես մեղադրով էլ չէր գտնում ականջի զոյգ օ-
ղը, յանկարծ կըկորչէր թանգարին շորը, կամ
փշացրած, ձեռքերը կ'ընկնէր : Նրա բոլոր թշնա-
միքը թէ այր և թէ կին մարդիկ ունենումէին
միանգամ անբազութիւն գայթակղուիլ լի եռա-
ցած ջրով կաթսայի վրայ և լու սյրուիլ, կամ
ապականել իրանց շորերի քղանցը ցեխոտ ջրի
մէջ : Նոյն բոլէին լինումէր քննութիւն , բայց
մեղաւորին չէին գտնում : Հազար ու մի անգամ
ներկայացնումէին ծառաները թոփսիուն օրիորդ
Օֆէլիայի առաջ : Բայց նա՝ այդ հարց ու փոր-
ձութիւնքը հանդարտաբար ու ծանրութեամբ
լսելուց յետոյ, կարողանումէր մի այնպիսի ան-
մեղութիւն և սլարդմտութիւն ցոյց տալ երեսի
վրայ, որ թշնամիքը այնուհետեւ ևս մնալով երկ-
մտութեան մէջ , տալիս էին միշտ նրան կարո-
ղութիւն աղատուելու արժանաւոր պատուհա-
սից :

Մի օր Սէն-Փլէրը, թեկ ընկած պատշգամբի բամբուէ բաղմոցի վրայ, ծխախոս էր քաշում, օրիորդ Օֆէլիայի սենեակից բարձր աղաղակի և սաստիկ անբաւականութեան ձայն լսուեցաւ:

— Ի՞նչ նոր խաղ խաղացել է այդ սատանայ թոփսին, բացադանչեց Սէն-Փլէրը, բատ որում տարակոյս չկայ, որ աղմկի պատճառը նա լինի:

‘Այն իսկ վայրկենին օրիորդ Օֆէլիան սաստիկ բարկացած, վրդովուած, պատշգամբը մըտաւ, իր հետ քաշաքաշ բերելով թոփսիուն:

— Ի՞նչ է եղել, քոյր, հարցրեց Սէն-Փլէրը:

— Այն, որ չեմ ուզում էլ տանջուել այս երեխայի ձեռումը, համբերութիւնս հատաւ: Փակեցի նրան սենեակիս մէջ ու տուի մի տաղ սովորելու, բայց հազիւ ես դուրս էի գնացել, մին էլ տեսնես առաւ բանալին, որ խնամքով պահել էի, բաց արեց արկզս, հանեց միջից գլխարկի ժապաւէնը և սկսուառեց իր պաճուճաղարդի շոր կարելու համար: Այսօրինակ բան ես երբէք չեմ տեսած:

— Եկ այս տեղ, կապիկ, ասաց Սէն-Փլէրը, նշանացի առնելով իր մօտը գալու:

Թոփսին մօտեցաւ նրան, գլորակ ու մռայլ աչքերը փայլատակումէին և թորթափումէին մի առանձին երկիւղ ու կամակորութիւն ցոյց տալով:

— Ի՞նչու համար դու սցղպէս վաս ես վար-

վում, յաւելցրեց Սէն-Փէլքը, որ նայելով նրա
վրայ հաղիւ կարողանումէր ծիծաղը բռնել;
— Առդարեւ շարասիրտ եմ, ասաց Թոփիսին
փառաւոր ձայնով, օրիորդ Օֆէլիան էլ նոյնը ա-
սացաւ բայց առաջաւ առաջ բայց

— Միթէ չդիտես որքան հոգս տարաւ քու-
վրայ օրիորդը: Ասումէք, որ չդիտէ, թէ ի՞նչ անի
քեզ. դու ինքդ այդ լսեցիր:

— Ճշմարիտ է քապարոն, առաջուայտիկինս
էլ այդսկէս էք ասում: Նա առաւել խիստ էք
ծեծում, զորօրինակ մաղերս էք միետում, դը-
լուխս սկասին էք խիստ, և ինձ ամենեւ ին չուղ-
ղեց. թէ որ կամենար գլխիս բոլոր մաղերը ևս
փետել, դարձեալ ոչինչ. ճս չար եմ, ով Աս-
տուած, չար կմ: Ես ուրիշ բան չեմ, բայց եթէ
մի խափշիկ աղջիկ:

Սէն-Փէլքը և Օֆէլիան լուս հայումն մի-
մեանց վրայ: Իսկ Եւան, որ մինչեւ այն ժամա-
նակ լուռ լսումէք նոյա խօսակցութիւնը, նշա-
նացի արաւ Թոփիսիուն գալ յետևից, և երկուքն
էլ մարան մի փոքրիկ ապակեայ դռներով սենեակ,
որ սովորաբար Սէն-Փէլքը Պնումէք կարդալու:
Հետաքրքիր եմ տեսնել, թէ ի՞նչ է անելու
Եւան, ասաց Սէն-Փէլքը գուղենին:

Եւ դնելով մատները իր շրթունքի վրայ, լը-
ռութեամբ հրաւիրեց նշանով օրիորդ Օֆէլիային,
իւրեան ուղեկից լինել: Բարձրացուցին փոքր

ինչ դրան վարագոյրը և տեսան նոցա դէմ ու
դէմ նստած յատակի վրայ, թոփսիուն, իր այ-
լանդակ, ծիծաղտշարժ և անփոյթ կերպարան-
քով, իսկ Եւային ալտաատւաղից աչքերով, որ
բացայացտումէին մի քնքուշ հոգու անբոխմունք,
կարեկցութեան վառուած սիրով:

— Ինչո՞ւ համար դու, թոփսիր, այդպէս չար
ես, ինչո՞ւ համար չես աշխատում բարիանալ,
միթէ դու ոչ ոքի չես սիրում, հարցրեց Եւան:

— Զգիտեմ ի՞նչ է սէրը, սիրումեմ շաքարե-
զէնք, նարինջ և էլ ոչինչ, ասաց թոփսին:

— Իսպաց սիրումես հօրդ, մօրդ:

— Ես երբէք հայր և մայր չեմ ունեցել,

դուք այդ գիտէք, օրիորդ Եւա, ես ձեզ ասել եմ:

— Ո՞չ, գիտեմ, սկատասխանեց Եւան տիսրու-

թեամք, բայց եղբայր, քոյր, մօխաքոյր ունի՞ս:

— Ինաւ ոչ ոք չեմ ունեցել:

— Իսպաց, թոփսի, եթէ դու քեզ հարկադրէիր

բարի լինել...

— Այիթէ կարող էի ես, խափշիկ աղջիկս,
բարի լինել, թէ և կամենայի այդ: Եթէ կարո-
ղանայի կաշիս հանել և սպիտականալ, անշուշտ
կըփորձէի:

— Եյդ փորձը — այնու ամենայնիւ քեզ կա-
րելի է սիրել, թէ և սե ես. եթէ դու բարի
լինէիր, օրիորդ Օֆէլիան կըսիրէր քեզ:

Թռոփսին այս համոզման մի դառն և հեղնական ծաղրածութեամբ սրատասխանեց:

— Ձե՞ս հաւատում, հարցրեց Եւան:

— Աչ. նա ինձ չէ սիրում, որովհետեւ ես խափշիկուհի եմ. շրտով նա դորտի կըկտէի, քան թէ ինձ. ոչ ոք չէ սիրում սեին և սել ոչ ինչ լու բան չէ կարող անել. ես ծիծաղումնեմ այդ բանի վրայ, առայ Թռոփսին սուլելով:

Ահ, Թռոփսի, խեղջերեխայ, ես քեղսիրումնեմ. ասաց Եւան խօրին զգացողութեամբ, և թեկն տուած իր փոքրիկ, սիրուն և սպիտակ ձեռքերով նրա ուսի վրայ, աւելցրեց. ես սիրումնեմ քեղ այնոք համար, որ դու անհայր, անմայր, խեղջաղջիկ ես, առանց լնտանիքի և օդնուկանութեան:

Ես քեղսիրումնեմ և ցանկոնումնեմ, որ դու բարիանաս: Ես սաստիկ հիւանդ եմ, Թռոփսի, երկար չեմ ապրել, շատ ցաւալի է ինձ տեսնել քեղ այդպէս չար: Եղիր բարի, իմ սիրոյ համար, շատ չէ մառմ ինձ քեղ հետ միասին լինելու, Թռոփսի: Խոշոր արտասունքով լցուեցան յանկաքծ փոքրիկ խափշիկուհու գլորակ և թափանցիկ աշքերը, և գլորուեցան կամաց կամաց Եւայի ձեռքի վրայ հաւատի և աստուծային սիրոյ ձառագ այթը երևեցաւ այդ հեթանոսական ոգու խաւարի միջից: Թռոփսին լսելով իր դեռահաս տիկնոջ քնքուշ և սիրելի խօսքե-



— Ինչու համար դու, Թափիսի, չես աշխատում բարիանալ. մի՛թէ
դու. ոչ ոքի չես սիրում՝ հարցը Եւան:

— Զգիտեմ ի՞նչ է սէրը, ևս սիրումմ շաքարեղէն, նարիջն և
էլ ոչինչ, պատասխանեց Թափիսին:

րը, ձգեց գլուխը նրան ծնկերի վրայ նկամալալու
հեկեկալ, այն ինչ Եւան գլուխը լառնպրհած
նրա վրայ, կարծես թէ մի հրեշտակ էր, մեզա-
ւորին ազատելու համար եկած :

— Խե՞ղճ թոփախ, ասաց Եւան, մի՛թէ չգի-
տես, որ Յիսուսը սիրում մեղ ամենիումիւն նոյն
սիրով . քեզ էլ այնպէս է սիրում, ինչպէս ակ
ինձ, բայց նա քեզ էլ աէելիսիրումէ քանչթէ
ես, որովհետեւ նա առաւել գերազոյն է միւս արտ-
րածներից. նա, քեզկ'օգնի բարիանալու, և դու
վերջապէս կը վերանաս երկինք, յաւիտեանք
հրեշտակ մնալու, որպէս և սպիտակը. Մտածիր
փոքր ինչ, թոփախ, միտդ բեր, որ դու կարող
ես փայլուն ոգիներից մինը լինել, որ եղբայր
թոմը փառաբանումէր իր հօգերը երգերի մջ :
— Ո՞՛Տ, սիրելի Եւայ, սիրելի օրիորդ Եւա,
ասաց ուրախութեամբ թոփախն, կ'աշխատիմ ,
կ'աշխատիմ. ես առաջ չէի մտածում այդ բանի
վրայ:

Սէն-Քէրը բաց թողեց վարագոյրը:

— Սիրելի Եւան, ասաց նա իր քրոջ, միտն
է բերում մօրս, որ յաճախ ասումէր ինձ «Եթէ
կամենաք կուրին լսս տալ, պէտք է կանչել նր-
ան մեր մօտ և Քրիստոսի նման ձեռքերս նրա
վրայ դնել»:

— Կատալաւ, սլատասխանեց օրիորդ Օֆէլի-
ան, բայց ես միշտ տհաճութիւն եմ ունեցել իւ-

պի խափշիկները և վախեցել եմ կազմել այդ երեխային:

Խայց Եւան տակաւին չէր վախում:

— Ո՞՛Տ, Եւան մի ուրիշ քան է. նրա սիրտը շատ փափռէ և քնքուշ է: Վերջանկէս, յաւելացրեց մտածողական գէմքով, Եւայի վարքը գրոշմած է Աւետարանի սկասուիրանքումք, քուլոր սրտիցս կը ցանկանայի նրա նմանել, սկսումնամ հաւատալ, որ նա տուաւ ինձ փրկարկան դաս, իրեն հետևելու:

— Առաջի անգամը չէ, ասաց Սէն-Քէրը, որ երեխայքը օրինակ են եղել մեծերուն:

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Որովհետեւ էգուցուայ ընթերցանութիւնը առաւել երկար է լինելու, քան թէ այսօրուանը, ուստի, երեխայք, սկսոք է սովորականից մի ժամ՝ առաջ ժողովել:

ՍՈՓԻՍ. Ըառ լաւ, մայր, գուցէ մենք վերջապէս կ'իմանանք Եղբայր Թամի ազատութիւնը:

ԵՒԱՒՄՐԻ. Մոռացար, Սոփիա, ի՞նչ ասաց մայրս Հետաքրքրութեան մասին:

ՀԵՎԻՆԻ. Եղուարդը ուղիղ ասաց, բաւականանք մտածելով այն կապների վրայ, որ պարունակումէ այդ սկասմութիւնը:

Պէտք չէ լսել ընթերցանութիւնը ուրախութեան համար միայն, ուղիղ չէ, մայր:

Տեսակ ՊԱԼՄԵՐ. Անտարակոյս, աղջիկս, բայց
քրոջըդ անհամբերութիւնը այնքան մեղադրելի
չէ, որովհետեւ բզմումէ նրա սրտի բարիութե-
նից: Մինչև էգուց, սիրելի երեխայք:

Համար ու զայն է անսպասելին ըստ չ գոված
ուղարկեալ ք. թիրաւ անդամնեան առաջ ե
ըստ շնորհած առջևադառն առ Ա. Ե. Յ. Օ. Ա. Յ.
ինձքային մակար զայն տարեական շնորհ
մեջայցայ ժամանակ այս Առաջին առաջնորդ է Ե
Կ. Խ. Օ. Թ. Ն. Ե. Բ. Ռ. Պ. Ա. Մ. Ա. Յ. Ա. Յ. Ա. Յ.

Տիկին Պալմեր.—Հեղինել. —Սովիա. —Եղուարդ:

Տեսաւ Պալմեր. Աիրելի Երեխայք, երեկուայ
մեր մանրամասնաբար կարդացած տխրալի պատ-
մութիւնը փոքրիկ Եւայի ուժի նուազութեան
մասին, անտարակոյս, միջոց տուաւ ձեզ պատ-
րաստուելու լսել նրա սդալի շարունակու-
թիւնը, որ մնումէ ինձ յառաջ տանել։ Այսօր
նա թեկ ընկած անկողնի վրայ հանդարտ խօ-
սումէ մօրը հետ, որ մօտը նստած է։ Յանկարծ
այդ խօսակցութեան միջոցին աղջիկը բացագան-
չեց.

— Այսինքն, ես ուզում եմ մաղերիցս մի մեջ
կտոր կտրել:

— **Exhibit** **to** **the** **Bill** **of** **Control**:

— Այսը, ուղումնեմ բարեկամներիս տալ, քանի
որ դեռ բաւականի՞ զօրովթիւն ունիմ սցու ա-

ոսաջարկութիւնը ինքն անելու նոցա; կանչեցէք
քրոջս այս տեղ:

Տիկին Սէն-Փէրը խկոյն ձայնը բարձրացրեց
ու կանչեց Օֆէլիային;

Երբ հօրաքոյրը եկաւ, երեխան, ասես թէ
խաղալ կամենալով, ցնդեց երկայն ու գանգուր
մազերը և ասաց ժալտելով.

— Հօրքոյր, եկէք խուզեցէք այս ոչխարին:

— Այդ ի՞նչ կը շանակէ, ասաց Սէն-Փէրը,
մտնելով սենեակ, ձեռքում պատուղներ բռնած,
որ քերել էր իր աղջկայ համար:

— Հայրիկ, ես կամենում եմ, որ հօրքոյրս
մազերս կտրէ, ըստ որում այնքան երկար են,
որ շատ տաքութիւն են տալիս ինձ. Նա մանա-
ւանդ, ես ուզում եմ բաժանել բարեկամներիս:

Օրիորդ Օֆէլիան վերադարձաւ երկու մըկ-
րատ ձեռքին բռնած:

— Օգոյշ եղիր, քոյրս, տակից կտրիր, ես
շատ սիրում եմ Եւայի դեղեցիկ գանգուրների
վրայ նայել:

Ո՛չ, հայր, ասաց Եւան տխուր ձայնով:

— Այս, այս, պէտք է լաւ պահել այդ մա-
զերը այն օրուայ համար, երբ որ ես քեզ կը-
տանեմ քո հօրեղբօր կալուածը, քո հօրեղբօր
որդուն Հենրիկին այցելութիւն անելու, ասաց
Սէն-Փէրը ժալտելով:

— Ես չեմ գնալ երբէք այն տեղ, սիրելի

Հայր, այլ կ'երթամբ աւելի դեղեցիկ աշխարհ,
Հաւատացնումեմ ձեզ: Չէք տեսնում միթէ, որ
օր ըստ օրէ թռւլանումեմ:

— Հոգիս, ինչու համար միշտ մի և նոյնը
կրկնումես:

— Որովհետեւ այդ հշմարտութիւն է, հայր:
Նա նշանացի արաւ հօրը գալ նստել իր մօտ.
Հայրը իսկոյն կատարեց աղջկայ խնդիրը:

— Այր, ասաց նա, ես զգումեմ, որ զօրու-
թիւնը թռղնումէ ինձ, երեխ շուտով ճանա-
պարհ կ'ընկնիմ: Բայց դեռ շատ բան մնումէ ա-
սելու, շատ բան մնումէ անելու, բայց ժամանակը
փայլակի արտգութեամբ առաջ է գնում, ուս-
տի, թէւ ձեզ անհաճոյ և հակառակ է, սակայն
ինձ հարկաւոր չէ ժամանակ կորցնել, ուրեմն,
հայր, եթէ թոյլտութիւն կըտաք, իսկոյն կը-
սկսեմ խօսել:

— Ես քեզ թռղնումեմ խօսել, զաւակս՝ ա-
սոց Աէն-Քէրը, ծածկելով մի ձեռքով երեսը,
այն ինչ միւսի մէջ բռնել էր իր աղջկայ ձեռքը:

— Ես կամենումեմ տեսնել բոլոր մեր մար-
դիկը այս տեղ ժողովուած. ես ուզումեմ ամե-
նուն մի բան ասել:

Այն ինչ սորուկները սենեակ մտան, Եւան
ըսրածացաւ անկողնից, ձգելով իր արտասուա-
թաց աչքերը նոցա վրայ: Աւերը նայեցան մին
մինի վրձ, ա՛խ քաշեցին գլուխները շարժելով.

ինչպէս երեւումէր, ամենքը տխրած ահ ու դողի մէջ էին, իսկ կսնայ քը երեսները զենջակով ծածկել էին:

— Ես ձեզ կանչեցի, սիրելի բարեկամք, ասաց Եւան, սյնոր Համար, որ ես ձեզ սիրումնեմ, բոլորիդ սիրումնեմ, և այն, ինչ որ ասելու եմ, կամենումնեմ, որ միշտ մտքերդ պահէք . . . Ես ձեզ շուտով կը թողնեմ, մի քանի շաբաթից էլ չէք տեսնիր ինձ:

Այս խօսքերը ասելիս նա ընդհատուեցաւ ընդհանուր հեկեկանքի ու լացի ձայնով: Մի վայրկեան սպասելուց յետոյ, աւելի ծանր ու հանդարտ եղանակով նա շարունակեց.

— Եթէ սիրումէք ինձ, մի կտրէք խօսքս, լսեցէք միայն, ես կամենումնեմ խօսել ձեր հոգու վրայ, սիրելի բարեկամք. շատերը ձեզանից խիստ սակաւ մտածումն դրա մասին, դրադ ված լինելով երկրային գործերով. բայց կայ աւելի գեղեցիկ աշխարհ, ուր բնակումէ մեր տէր Յիսուս Քրիստոսը: Ահա գնումնեմ այն տեղ, յոյս ռւնիմ այն տեղ գնալու, այնտեղ, ուր դուք էլ կարող էք մի օր գալ. բայց եթէ կամենումէք մտնել այդ աշխարհը, սկսոք չէ լինիք անհոգ, ծոյլ ու անգործ, այլ աշխատասէր, ճշմարիտ Քրիստոնեայ: Պէտ չէ մուանաք, որ իւրաքանչիւրը ձեզանից կարող է լինել հրեշտակ այդ բանը իրագործելու, կ'օգնի ձեզ մեր Տէր Յի-

սուսը : Խնդրեցէք նրանից, նա կը լսէ ձեր խընդիրը : Երբ աղատ ժամեր կ'ունենաք, կարդացէք կամ կարդալ տուէք Աստուածաշունչը : Ես էլ ձեզ համար աղօթք կ'անեմ և կը յուամ, որ ամենքս մի օր կը տեսնուինք երկնքումը :

Այս խօսքերը լսելիս ստրուկնը ըստ, առանց բացառելու երեխաները, լիրա ու անդամները, զգալով մի անդսպիլի ամբոխմունք, խոնարհեցին իրանց գլուխները մինչև ծունկերը ու սկսեցին կտկծեցուցիչ հեկելանքով լուլ :

Այս գիտեմ, շարունակեց Եւան, զօրութիւնը տալով իր ձայնին, որ դուք ամենքրափնձ ու բումեք :

— Ստուած օրչնէ քեզ, միաբերան և կերկերած ձայնով ասացին բոլոր ստրուկները : — Օ գալով ձեր սէրը դէպի ինձ, կրկնեց աղջիկը, ևս կամենումնեմ տալ ձեզ յիշատակի համար մի մի թել մաղիցս, ապացոյց ու նշան բարեկամութեանո : Ամեն անդամ; Երբ կը նայէք այդ մաղի վրայ, միոքերդ կը բերէք, որ ես ձեզ սիրում էի, և նախախնամանութեան շնորհքով գնացի, այն տեղը, ուր կապասեմ բոլորիդ :

Դժուար է նկարագրել այն տեսարանը, որ տեղի ունեցաւ վերջի հրաժարական ողջունից յետոյ. Խափշիկները փղձկելով ու ճիչ բաձրացնելով ժուռ էին գալիս փոքրիկ, նաղելի աղջկայ չորս կողմը, նրա ձեռքից սիրոյ նշանը ստանա-

լու. Համար. յետոյ կարգաւ ծունկ չոքելով համբուրտմէին նրա զգեստի ծայրից. իսկ աւելի համակաւորները դորովալից ու քաջալերական խօսքեր էին սառւմ նրանց իրանց սրտառուչ ու քնքուշ ցեղի առվորութիւններին համեմատ:

Օֆելիան երկիւղ կրելով, որ մի դուցէ աղջրկայ հիւանդութիւնը սաստկանայ, նշանացի արաւ ստրուկներին, որոնք արդէն ստացել էին թանկագին պարզեց, դուրս ելանել սինեակից:

Վերջապէս մնացին թոմը և Մամմին:

— Ե՞ս, եղբայր թոմ, առաց Եւան, առ քեզ այս գեղեցիկ խոպանիքը. ո՞հ, ինչպէս ես ուրախ եմ, Եղբայր թոմ, որ կը անեմ քեզ երկնքումը, ըստ որում հաւաստի եմ, որ դու անսլատձառ կը լինիա այն տեղ: Եւ դու, Մամմի, սիրելի, քաղցր, թանգարին Մամմի, դու էլ կը պաս այն տեղ, բացագանցեց նա, ձգելով ձեռքերը պառաւ դայեակի ուսերի վրայ:

Օրիորդ Օֆելիան կամացուկ դուրս հանեց սենեակից թոմին ու Մամմիուն, յուսալով որ այնուհետեւ փոքրիկ հիւանդը փոքր ինչ կը հանգաւանայ, բայց սամտիկ զարմացաւ, երբ վերադառնալիս տիսաւ թոփսիուն Եւայի մահճակալի մօտ կանգնած:

— Հապա դու ո՞ր անկիւնից եկար այս տեղ, հարցրեց նա ապշաճ:

— Ես շատ ժամանակ է այս տեղ եմ, ասաց

Թոփսին սրբելով աչքերի արտասունքը : Ո՞հ, օրիորդ Եւա, ես ինքս զգումեմ, որ շատ չարասիրտ եմ, բայց բարեհաճեցէք ինդրեմ ինձ էլ տալ մի կտոր ձեր մազից յիշատակի համար :

— Ենպատճառ, խեղջ թոփսի, ես քեզ էլ կըտամ իմ մազից : Ահա առ. ամեն անգամ, երբ կընայես սրա վրայ, միտքդ բեր, որ ես քեզ սիրումէի ու շատ կըցանկացի, որ դու բարի ու բաղդաւոր լինիս :

— Ե՞ս, օրիորդ Եւա, ես շատ աշխատումեմ, բայց չեմ կարող փոխուել, չեմ կարող բարի լինել, ինչու որ ամեննեին վարժուած չեմ :

— Աեր Տէրը անտես չի առնել քո բարի ցանկութիւնը և կ'օգնէ քեզ :

Եյս խօսքերիս վրայ թոփսին ծածկելով իր երեսը զենջակի մէջ և պահելով ծոցումը օրիորդի խօսպուիք մազերը, լուռ ու մունջ դուրս ելաւ սենեակից :

Վի քանի օրից յետոյ, Օֆէլիան, որ յանձնառու էր եղել գիշերները փոքրիկ Եւայի մահճակալի մօտ նստել, նկատեց մի չարակուշակ փոփոխութիւն հիւանդի մէջ, և խոկոյն կէս գիշերին գնաց ու կամացուկ զարկեց Աէնաֆէրի դուռը :

— Եղբայր, եկ այս տեղ, ասաց նա:

Երբ այս տխուր համբաւը տարածուեցաւ, մի ակնթարթում բոլոր ստրուկները ոտքի ելան և

Երթեւկութիւնը եղաւ ընդհանուր: Խակոյն ամենքը հաւաքուեցան սկատշգամբի մօտ, ուղղելով արտասռաւլից աչքերը ապակիապատ դրան վրայ:

ԱՅՆ-ՔԼԵՐԸ ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում իր չորս կողմումը. նա բոլոր իր ուշադրութիւնը կենդրոնաւորել էր աղջկայ երեսի վրայ: Քլուխը խոնարհած նրա ականջին, շնչումէր. «Եւա, իմ նազելի Եւա, ի՞նչ եղաւ քեզ»:

— Ո՞Շ, եթէ կարողանար միանգամ էլ զարթել, եթէ կարողանար միանգամ էլ խօսել հետո:

— Շանաշումես ինձ, Եւա, բացագանցեց հայրը անասելի տիսրութեամբ:

— Ծանգաղին հայր, շնչեց երեխան, և մի վերին զօրութեամբ գրկախառնեց նա ԱՅՆ-ՔԼԵՐԻն իր փոքրիկ թալկացած ձեռքերով, որոնք խակոյն ցած ընկան:

Օսկեն տուած բարձին, աղջեկը մնաց անշարժ. նրա մեծ և թափանցիկ աչքերը նայումէին դէպի վեր: Ո՞Շ, արդեօք ի՞նչ էին ասում այդ աչքերը, որ այնքան խօսումէին երկնքի վրայ: Երկիրը և աղջկայ չարչարանկները արդէն հեռացել էին, բայց նրա երեսի արյծառութիւնը այնպէս փառաւոր և խորհրդաւոր էր, որ ամենի կարեկցութիւնն էր շարժում: Բոլորեւան խանումէին նրա չորս կողմը շնչառութիւնները սկաչելով:

— Աւա, առաջ կամացուկ Սէն-Փլէրը, ասած
մեզ ի՞նչ ես տեսնում:

Եղջկոյ երեսը լուսուորուեցաւ պայծառ ժակի
տուլ. յետոյ հանդարտաբար շարունակեց քնդ-
միջողական ձայնով. «Ո՛հ, սէր, ուրախութիւն,
խաղաղութիւն»: Այս վերջի խօսքին հետևեց մի
հառաջանք և այնուհետև աւանդեց իր հոգին:

Մի քանի շաբաթից յետոյ, Սէն-Փլէրը մը-
տել էր սրճարան, գիշերական լրադիր կարդա-
լու համար: Յանկարծ մի սաստիկ կախ բացուե-
ցաւ երկու հարբած մարդերի մէջ: Նա ուրիշ
ներկայ գտանուողների հետ կամեցաւ բաժանել
կուողները. բայց սուացաւ մահացու հարտած
իր կուծքին սցդ հարբածների մինից:

Երբ Սէն-Փլէրին տուն տարին, ցաւի և ա-
րիւնի շատ վաղելու սկսումառաւ, նա ուշաթափ
վայր ընկաւ: Աւշաբերուելով օրիորդ Օֆէլիայի
խնամատարութեամբ, բացեց աչքերը և նայեցաւ
մօրքրով և սպասաւորների վրայ. յետոյ տարու-
թերելով իր հայեացքը շվջապատճ առարկանե-
րի վրայ, վերջապէս դադարեցրեց աչքը մօր
պատկերի վրայ:

Թռոմը ծունկ չոքած աղօթումէր նրա մօտ.
նա բռնեց խափիշիկ աղջկայ ձեռքից, նայեցաւ
կարեցութեամբ նրա վրայ, բայց չկալողացաւ ար-
տասանել և ոչ մի բառ: Մի քանի վայրկեան
մնաց սցս դրութեան մէջ, յետոյ բացեց աչքե-

ըլ և մի յանկարծական ուրախութեամբ բացագանցեց, — ի հարկէ տեսնելով մի որ և իցէ երեսյժ:

- $\nabla_{\omega_{\mathcal{P}}} \mu$:

Եւ այդ բառով աւանդեց նա իր հոգին:

• 204940 49013-940

ԱՐԹԵՐՈՒՄ ԱՐԱՅՈՑ.

Ասուհամասին այս պատճենը է առաջարկված. այս պատճենը աղասի է առաջարկված.

Տիկին Պալմբ, — Հեղինէ, — Առփիս, — Եղուարդ:

Տիկին ՊԱՐՄԵՐ. Այս վերջին անգամն է, երեխայքս, որ Հաւաքվումենք այս տեղ Եղբայր Թոմի տնակի պատճառով։

Հեմսէ. Աշայի ու Սէն-Քլէրի մահի տխուր
պատմութիւնը լսելուց յետոյ, խոստովանվումնեմ
ձեզ, մայր, որ քանի որ մօտենումնք այս պատ-
մութեան վախճանին, այնքան սաստիկ զգումնեմ
անհանդատութիւն:

ԱռՓԻՎ. Ե՞ւ էլ ոչ ստկաւ զգումնեմ նոյնը . երբէք այսպէս երկիւղ չի կրում մեր բարեկամ թումի առագայ վիճակի համար :

ԱՐԱԽՈՎԻ. Խնչու էք անհանգստանում. միթէ
մեղ յայտնի չէ նրա ջերմեռանդ հաւատը: Տա-
րակոյս չկայ, որ Եղբայր Թումը ինչ փորձանքի
մէջ էլ որ լինի, անպատճառ յաղթող դուրս կը-
դայ:

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. (կարդալով) ԱՅՆ-ՔԼԵՐԸ ԹՌՈ-
ՄԻՆ աղատութիւն տալու վրայ էր, մին էլ տես-
նես անակնունելի մահը տուաւ նրան իր հա-
րուածը; Այս անգամ մեր խեղճ Եղբայր Թռմը
ընկաւ Սիմոն Լեգրի անունով պարոնի ձեռքը,
որ մի կոպիտ, ցածահոգի, հարբեցով և խը-
տասիրտ մարդ էր; Այս Լեգրին, երբ նկատեց,
որ Թռմը բարեպաշտ ու կրօնասէր մարդ էր,
սկսաւ խեղճին վիրաւորել, աչքը վախցնել և
վրան ծիծաղել: Իսկ երբ նա հրաժարուեցաւ
տեսուչի պաշտօնից, որի պարտաւորութիւնը
ոչ միայն աչքէ անցնել էր խափշիկների աշխա-
տութիւնը, այլ և ծեծել նրանց սիրտը ուղե-
ցած ժամանակին, Լեգրին, վերջին աստիճանի
տաքացած ու զայրացած, հրամայեց երկու զօ-
րել, անհոգի ու անհաւատ խափշիկներին բերել
իր մօտ պարբռնիքոն Թռմին, ինչպէս որ նրան ծի-
ծաղելով անուանումէր: Վամքօն ու Քիմքօն
(Լեգրիու երկու գահիճների անուններն են) ու-
րախ ուրախ սկսան իրանց պաշտօնը կատարել
և պնդակազմ Եղբայր Թռմին այն օրը բերին,
որ բոլոր մարմինը ծածկուեցան սարսափելի խո-
ցերով:

— Հը, տղայք, ասաց Լեգրին նոցա, ձեզ
հարկաւոր է մի բան տալ այդ աշխատանքից
յետոյ:

— Ե հարկէ, սլարան, ես այնպէս ծեծեցի, որ

Հոգինը բերանը եկաւ, ասաց Սամբօն յաղթական
կերպարանիքով: — Իսկ ես, ասաց Քիմբօն, ձգելով նախանձա-
կան հայեացք Սամբօնի վրայը, ես էլ սպասիլ
նրա գլուխն էի տրորում: — Ո՞ր մասին այսըն
— Լաւ, ասաց Լեզբին մի վայրենի ռերա-
խութեամբ:


Յետոյ մի վայրկենի չափ մտածելուց յետոյ,
յաւելացրեց, ձգելով նոցա վրայ իր սպառնական
հայեաց քր.

— Աթէ ձեր անյաջողակութեան պատճառով
նա մեռնէ այս պատճից յետոց, որը ինչպէս ամել
էի, վերջինն ու վճռողականը լինելու չէր, այն
ժամանակ, տղայք, իմացած լինիք, ձեզ էլ կ'ու-
ղարկեմ նրա յետելից խլուղների երկիրը:

— Պուր, ալարոն, միշտ ծիծաղումիք; աղա-
ղակեցին դահիճները, իրանք էլ ծիծաղելով
այդ կատակի վրայ, թէ և խկառէս այդ ունանի
կատակները շատ սակաւ էր ուրախացնում նոցա-
սիրտը:

— Այս, աւելցրեց Լեզրին, տալով մի շեշ լի
արագով. դէ՛ հասկա, խմեցէք կարգով. ամե-
նայն աշխատանք արժանի է վարձատվութեան:

Առ երկու ուշը, նորից ծիծաղելով, շատ շուտ
դարսը կեցին շիշը, որից յետոյ էլ կարող չէին
ամբողջ օրը ուրախ ու գուարթ չինել:



— Հը՛, տղայք, ասաց Լեդրին, ձեզ հարկաւոր է մի բան տալ այդ
աշխատանքից յիսոյ:

— Ի հարկէ, պարսն ես այնպէս ծեծեցի, որ հոգին լերանը եկաւ:

Օռոմը մի շաբաթուայ բռնի անգործութենից
յետոց, երբ առողջացաւ, դարձեալ ընկաւ խեղ-
ճը մի նոր փորձանքի մէջ։ Երկու խափշիկուհի
փախել էին կալուածից և Լեգրին, փախստա-
կանները բռնելու համար, ուղարկել էր ի զուր
նոցա քամակից անհամար մարդիկ, և սովալլուկ
շները անգամ արձակել էր, որոնք դիտութեամբ
հրահանգուած էին այս անօրէն որսորդութեան
համար։ Յանկարծ մի չար միտք ծնաւ նրա գըլ-
խումը։ «Այս բոլոր բանի պատճառը անպիտան
թոմն է», բացագանցեց զարհուրելի հայեացք-
ներ ձգելով։ «Նա ծածուկ ծիծաղումն վրաս, հա,
հա, ծիծաղումն», աւելցրեց կատաղի բարկու-
թեամբ։ «Թող ինչ արժէք ուղի ունենայ, եթէ
չպատմէ ինձ այդ իրողութիւնը, վայ այն ժա-
մանակ նրա գլխին»։

— Օռոմ, բացագանցեց Լեգրին, մօտենալով
ստրուկին, դիտես, որ ես վճռեցի քեզ սպանել։
— Կատ կարելի է, սպառն, պատասխանեց
թոմը հանդարտաբար։

— Օ գոյշ եղիր, շարունակեց Լեգրին, ոյս
մօտելութիւնը հաստատ է, և անհրաժեշտ իրա-
դործուելու է, լսումես, թոմ։ կըներեմ միայն
այն ժամանակ, երբ որ յայտնես ուր են փախել
խափշիկուհիները։

Օռոմը լուռ մնաց։

— Հասկանումես ինձ, կրկնեց Լեգրին, ոտերը

գետնին խփելով ու կառաղած առիւծի պէս մը
ոնչելով։ Առնձնայ ապահով զի՞մ զուն
Սա չեմ կարող ոչինչ ասել, աբատախանեց
թամը հանդարտ ու համարձակ ձայնով։
— Տամարձակումն աղու հաստատել,
քաւժար քրիստոնեայ զոր ոչինչ չես իմանում,
ասայ Լեգրին, ատամները կրծութով։ բա զի՞մ
Թումը ոչինչ չեր պատասխանեւմ։ ու բանչայ
— Դէ խօսիր, կանչեց Լեգրին հայոցելով.
ասիրատեսնենք ինչ դիտեց փախստականների
մասին։ Վեցանուայ զեցնարար ու մասն
— Գիտեմ, պարոն, բայց չեմ կարող ասել,
լաւէ, որ մեռնեմ։
— Կընշանակէ պէտք է մեռնես։
Թումը բարձրացրեց աշխերը Լեգրիու վրա ու

պատգամնուն ավելի քայլ է ցըսնաբացակ Անօթի —
Առ Պարտի, Կթէ դուք հիւանդ լինէիք, կամ
Հոգեվլար չաքչարտէիք, իսկ ես կայողանայի ձեզ
փրկել, ես ուրախութեամբ կըզոհէի ձեզ Հա-
մար իմ՝ արիւնք, և եթէ Հարկաւոր լինէր կաթ-
կաթ քանել արիւնս սլարոնիս թանգագին Հո-
գին աղաստելու. Համար, իս ուրախութեամբ
յանձն ի՞առանէի, ինչպէս Փրկիչը մեզ Համար առ-
բաւ: Ո՞հ, պարտն, մի՛ առնէք ձեր Հոգու վրայ
այդպիսի ծանր մեղք, դոք ձեր անձին աւելի
ժիառ կրապիք, քան թէ իմձ:

ԽԱՄ տանջանքներս ինչպէս էլ մեծ ու անտանելի լինին, շուտով կըլերջանան, բայց ձերը կը լինին յաւիտենական, թէ որ չդղջաք:

Այս խօսքերիս վրայ Լեգրին զարմացաւ ու զսպեց կատաղութիւնը, բայց այդ անորոշ դրութիւնը բովէական էր. մին էլ տեսնես կատաղութիւնը նորից սաստկացաւ, երեսի գոյնը սպըրդնեցաւ, գաղանաբար յարձակուելով ստրուկի վըրայ, թշուառականին անգթաբար գետինը գլորեց:

— Սամրօ, Քիմրօ, եկէք այս տեղ, գոռաց կալուածատէրը կատաղի ձայնով:

Սամրօն ու Քիմրօն իսկոյն վազեցին եկան:

Օխոմի անյաղթելի համբերութիւնը շարժեց մի բովէ վայրենի գահիձների կոշտ սիրտը:

— ‘Եա գրեթէ մեռած է, ասաց Սամրօն անհաստատ ձայնով:

Օխոմը բաց արաւ աչքերը և, նայելով Լեգրիու վրայ, ասաց.

— Խեղձ ու թշուառ արարած, ասաց նա, բացի սրանից դուք էլ ոչինչ չէք կարող անել ինձ. Ես բոլոր սրտիցս ներումեմ ձեզ:

Եւ նրա աչքերը փակուեցան, ասես թէ մեռած լինէր:

— Վերջապէս այս անգամին մեռաւ, ասաց Լեգրին, մօտենալով ստրուկին:

Եւ այս ասելով հեռացաւ գնաց:

Բայց թոմը մեռած չէր: Զարչարանքի ժոհանակ նրա քաղցր աղօթքները շարժեցին դահիճների գութը: Եեդրիու հեռանալուն սկս, նոքալուացին զսի վէրքերը և բամբակի մնացած կըտորներից մի կոշտ անկողին շինելով, պառկեցրին նրա վրայ:

— Ո՞չ, թոմ, ասաց Փիմբօն, մենք շարաչար վարուեցանք քո հետ:

— Եերիւմեմ ձեղ բոլոր սրտիցու, ասաց թոմը տկար ձայնով:

— Ո՞չ, թոմ, ովէ Յիսուսը. միթէ դու ամբողջ գիշեր տեսնումես նրան քո կողքումը: Քրիստոնեաց ստրուկը, որին շատ չէր մնացել այս աշխարհը թողնելու, սատրիկ սգեռընեցաւ, մի քանի խօսքով պատմեց Փրկչի կեանքը, հրաշքները, Նրա մշտական ներկայութիւնը ամեն տեղ, և մարդիկ փրկելու կարողութիւնը:

Երկու դահիճները լաց էին լինում:

— Ես առաջ չեի իմանում այդ, ասաց Սամբօն, բայց հաւատումեմ, հաւատում, չեմ! կարողի հաւատալ:

— Յիսուսը կ'ողորմի մեղ:

— Խեղճ արարածներ, ասաց թոմը, ես շատ ուրախ կը լինիմ իմ քաշած չարչարանքներիու համար, եթէ կարողանամ տանել ձեղ Յիսուսի մօտ: Ո՞չ, Աստուած իմ, աղաչումնեմ քեղ, առնեինձ այս երկու հողին:

Երկու օրից յետոյ , մի երիտասարդ թեթև
կառքով անցնումէր ծառափողոցի միջով , որ
շքեղապէս զարդարումէր Լեգրիու բնակարանի
մուտքը , ցած թռաւ , ձգեց երասանակները ձիան
ուսի վրայ և խնդրեց տեմնել կալուածատիրոջ :

Այս երիտասարդը Գէորգ Շելքին էր:

Լեգրին ընդունեց նրան թթու կերպարան-
քով :

— Ես խմացայ , ասաց երիտասարդը , որ դուք
դնել էք Նոր-Օռլէանում մի ոտքուկ թում ա-
նունով : Կա բնակումէր Հօրս բնակարանում , և
ես այժմ եկել եմ նրան ազատելու:

— Ես այն տեղ , ախոռումն է , ասաց մի պա-
տանի ստրուկ , որ բռնել էր Գէորգի ձին:

Լեգրին յիշոց կարդալով քացի տուաւ փոք-
րիկ ստրուկին , իսկ Գէորգը վաղեց դէպի ա-
խոռը :

Եխոռը մտնելիս Գէորգի աչքը մութ կոխեց ,
սիրտը ճիշեցաւ և ոտքերը դողդոջեցան:

— Կարելի՞ է միթէ , կարելի՞ է միթէ , բացա-
գանչեց նա , ծունկի վրայ ընկնելով հոգեվարի
առաջ , Եղբայր Թում , իմ սիրելի , թանգագին
թում :

Գէորգի ձայնի շեշտը հասաւ մեռանողի մին-
չեւ սրտի խորքը . նա կամացուկ շարժեց գլուխը ,
ժպտեցաւ ու ասաց .

Կարծր մահիճը այնպէս է թուում ,

Ինչպէս փետրալից փափուկ անկողին,

Եթէ Փրկիչն է այցելու լինում՝

Նորա մէջ ընկած թշուառ հիւանդին:

Գէորգը գլուխը խոնարհած իր խեղճ բարեկամի վրայ, թափումքը առատ արտասունք :


— Ո՛չ, թանգագին Եղայր Թոմ, բացագանցեց նա, զարթիր, խօսիր միանգամ էլ, բայ աչքերդ, պարոն Գէորգն է եկել, քո փոքրիկ Գէորգը, միթէ չես ձանաշում ինձ:

— Պարոն Գէորգ, ասաց Թոմը տկար ձայնով, հանդարտ աչքերը բանալով, պարոն Գէորգ, կրկնեց ցնորուածի պէս:

Հայ ժամանակ հարկաւոր էր, որ պարզուէր նրա միտքը, որ շփոթուել էր այդ անունը լսելիս. վերջապէս միանգամայն պարզուեցաւ. նրա անհաստատ հայեացքը փայլեցաւ ու վճռողական եղաւ, կերպարանքը պայծառացաւ, ձեռքերը մէկ մէկու մօտեցան ու միաւորուեցան և աչքերից ցայտեցան կաթիլ կաթիլ արտասունքներ:

— Օրհնեալ է Աստուած, ասաց նա, այս էր պէտք ինձ, էլ ոչինչ: Նա մոռացած չէ ինձ, այդ բանը հոգիս է ուրախացնում, սիրտս միսիթարում, այժմ ես հանգիստ կըմեռնեմ: Օրհնեալ ինի Աստուած:

— Դու չես մեռնիլ, ես չեմ ուզում, որ դու մեռնես, կամ մոտածես մահի վրայ: Ես եկել եմ



— Ես եկել եմ քեզ գնելու և հետո տանելու, բայց ապանձեց Գերդը ոգեսրութեամբ։

— Ո՞՛չ, պարոն Գեորգ, շատ ուշ եկաք, Տէր Յիսուսը դնեց ինձ։

գեղ գնելու ու հետո տանելու, բայցագանչեց
Գէորգը ոգևորութեամբ:

— Ո՛չ, պարոն Գէորգ, շատ ուշ եկաք, Տէր
Յիսուսը գնեց ինձ: Ինքս էլ խիստ փափաքումեմ
ու շտապում մտնել նրա բնակարանը: Երկինքը
անհամեմատ գերազանց է Քէնդուկիուց::

— Ո՛, մի՛ մեռնիր, այդ ինձ կըսպանէ, իմ
սիրտս կտոր կտոր է լինում, երբ մտածումեմ
քո քաշած չարչարանքների վրայ... ինձ ասացին,
որ ամբողջ երկու օր լնկած էիր այս հոտած և
ցեխուտ ախոռի մէջ.... Ո՛չ, խեղճ, խեղճ բա-
րեկամ:

— Ա՞ր կոչիր ինձ այդպէս, պատասխանեց
Թոմը հաստատ ու բարձր ձայնով. ես մի ժա-
մանակ խեղճ ու ողորմելի էի, բայց այժմ ոչ.
այդ բոլորը անցած գնաց: Այժմ ես կանգնած
եմ փառքի շէմի վրայ. Երկինքը մօտ է. Թոմը
յաղթող հանդիսացաւ, Տէր Յիսուսը ուղարկեց
նրան այդ յաղթութիւնը. թող փառաւորուի Նրա
անունը:

Լուռ, անշարժ կանգնած իր հին բարեկամի
առաջ, Գէորգը խորին յարգանքով նայումէր
նրա վրայ:

Թօմը բռնեց Գէորգի ձեռքից և շարունա-
կեց.

— Ոչինչ հարեկաւոր չէ ասել Խլոյէին: Խեղճ
կին, մահացու հարուած նրա համար: Ասացէք

միսյն նրան, որ տեռաք ինձ փառքի ճանալարհումը, և եթէ ես ոչ ոքի համար էլ չեմ կարով մնալ այս տեղ, ասացէք, որ Տէրս միշտ և ամեն տեղ ինձ հետ է եղել և ամեն բան ինձ համար հեշտ ու դիւրին է արել: Իսկ փռքրիկ երեխայքս և օրօրոցի փաքրիկ մանուկմ ժամանակ ժամանակ սիրոս կտոր կտոր են անում: Ասացէք նրանց էլ, որ ինձ հետևին... թող հետեւին ինձ... բարեւ արէք պարոնիս, թանգագին ու բարի տիկնոջս, և կալուածում բոլոր կեցողներին, որոնց դուք լաւ գիտէք, կարծեմ, նոքա ամենքը սիրումեն ինձ... ես էլ միշտ ու ամեն տեղ սիրումեմ բոլոր արարածներին..... ամենայն բան ինձ համար սէր է.....

Թումի մարմինը ստանալուց յետոյ, երիտասարդը թաղել տուաւ և, ծունկ չոքելով իր հին բարեկամի գերեզմանի, վրայ ձեռքերը բարձրացրեց դէպի երկինք ու ասաց

— Վ կայ եղիր, ով Աստուած իմ, երդմանս, որ կ'ոչնչացնեմ իմ երկրում ստրուկավաճառութեան նզրվաը:

Դեռ մի ամիս չէր անցել այն սոսկալի եղերերդութեան օրից, մի մուժ ձմեռուայ երեկոյ լոււեցաւ ու. Շելքիու գաւթումը կառքի անիւների դղութիւն:

— Պարոն Գէորգն է, բացագանչեց Խլոյէն, վազելով դէպի պատուհանը:

Տիկին Շելթին շտապեց դէպի դուռը, ուր իր
որդին գրգախառնեց նրան : Խլոյէն անշարժ
գանգնել էր աշխատելով իր աչքերով թափան-
ցել գիշերային մռայլը :

Ա՛հ, խեղջ Խլոյէ, ասաց Գէորգը կարեկցու-
թեամբ մօտենալով նրան և իր ձեռքը նրա ձեռ-
քերի մէջ դնելով, ես իմ բոլոր ունեցած չունե-
ցածս կը տայի, թէ որ կարողանայի բերել նը-
րան ինձ հետ, բայց նա հեռացաւ մեզանից,
դնաց աւելի լաւ աշխարհ :

Տիկին Շելթին ճիչ բարձրացրաւ, բայց Խլոյէն
ոչ մի բառ չարտասանեց :

Կոքա մտան դահլիճ, մի սեղանի վրայ դար-
սած էր բաւականին մեծ գումարի փող, որ
Խլոյէն հաւաքել էր իր ամուսինը ազատելու հա-
մար :

Կա վեր առաւ փողը և, դնելով իր տիկնոջ
ձեռքը, ասաց.

— Եւ չեմ ուզում ես տեսնել այս փողերը,
տիկին, և ոչ եւ լսել սրանց մասին մի բան : Ես
գիտէի ինչպէս պիտի վերջանար, ծախուեցաւ և
չարչարանքով սպանուեցաւ այն հին կալուած-
ների մէջ :

Այս խօսքերս ասելով, Խլոյէն հպարտ հը-
պարտ ուղևորուեցաւ դէպի դուռը :

— Խմ խեղջ, բարի Խլոյէ, բացագանցեց տի-
կին Շելթին, երթալով նրա յետելից և կամա-

զուկ նստեցնելով աթոռի վրայ, որի մօտ ինքն
էլ խալոյն տեղաւորուեցաւ:

Խոլոյէն, գլուխը իր տիկնոջ ուսերի վրայ ձը-
դած, սկսաւ փղձկալ.

— Ո՞չ, տիկին, ներեցէք ինձ, բացադանչեց
նա, սիրոս կտոր կտոր է լինում:

— Գիտեմ, ասաց տիկին Շելքին. որի ար-
տասունքը առատորէն թափումէին. ես չեմ կա-
րող փարատել քո սիրու, բայց Տէր Յիսուսը
կարող է, Նա բուժումէ խոցուած սիրուերը, կա-
սլումէ նրանց վէրքերը:

Այս խօսակցութեան հետևեցաւ երկարատև
լուրժիւն. ամենքը լաց էին լինում. վերջապէս
Գէորգը, նստելով այրի կոջ մօտ, առաւ նրա
ձեռքը ու պատմեց սրտառուց սլարդութեամբ
նրա ամուսնու նահատակութիւնը, և կրկնեց
նրա վերջին խօսքերը:

Ո՞ի ամիս անցնելից յետոյ, մի առաւօտ Շել-
քիու կալռւածի բոլոր ստրուկներին հրամայե-
ցին ժողովուել մեծ պատշգամբի մէջ դեռահաս
պարտնից մի նոր համբաւ լսելու, որ յատկարար
վերաբերվումէր նրանց օգտին:

Գէորգը երևեցաւ ձեռքը թղթի կապոցով:
Այդ թուղթերը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ նոցա
աղատութեան վկայագիրները, որ խալոյն բաժա-
նեց սարուկներին, առաջ թերթերի բովոնդա-
կութիւն կարդալով: Սակայն նոցանից մէջ մա-

սը, յայտնելով իրանց ուրախութիւնը ու շնորհակալութիւնը այս անակնունելի համբաւի համար, շրջապատեցին նրան և աղաչելով սղաղատելով, արտասուելով ու հեկեկալով խնդրեցին, որ յետ առնէ տուած վկայագիրները:

— Ա՞եղ հարկաւոր չէ աւելի աղատութիւն, ասումէին նոքա, մերը մեղ բաւական է: Ա՞ենք մեղ համար ամեն հարկաւոր բանը ունինք, մենք չենք ուղում թօղնել ոչ այս հին տունը, ոչ ապարանիս, ոչ տիկնոջս. մի խօսքով ոչ մի բան:

Երբ այս պատաշարժ տեսարանը փոքր ինչ հանդարտեցաւ, Գէորգը կանդնեցաւ պատշգամբի մէջ տեղը ու սկսաւ խօսել այսական պարագաներից ու այլ առաջնական գործերից:

Իմ բարեմիրու բարեկամք, մենք պատասխան բարդութիւն կանոնակ ունենալ միմեանցից բաժանուելու կալուածը հարկաւորութիւն ունի նոյնչափ ձեռքի, որքան որ նրան հարկաւորումէր ձեր աղատութենից առաջ:

Արայն թէ այժմ ամենքդ — այր ու կին մարդիկ, ծերք և տղայք, աղատ էք, ես կըտամ ձեղ վարձատրութիւն, որ բարեկամաբար պայմանով կընշանակենք: Ես դարձեալ օգուտ կըքաղեմ իմ կալուածից: Ես յոյս ունիմ ձեր յօժար կամքի ու ջերմեռանդութեան վրայ: Այժմ, բարեկամք, բարձրացրէք աշքերդ դէպի երկինք, և շնորհակու եղէք Աստուծուց: Էլ մի խօսք, աւելցրեց նա կարճ ժամտնակամիջոցից յետոյ:

ԶԷ.ք մոռացել արդեօք մեր բարի Եղբայր Թու-
մին:

— ԱՇ, ոչ, ոչ, բացագանցեցին ամենքը միա-
բերան:

‘Սա կարձառաւաբար պատմեց Եղբայր Թումի-
մահը և յայտնեց նրա հրաժարական ողջոյնը,
որ արել էր իր հին ընկերներուն:

— Տեսնումէք, բարեկամք, այդ երեելի նա-
հատակի գերեզմանի վերայ էր, որ ես երդում
կերայ դէմուդէմ Աստուծու երբէք կալուածիս
մէջ ստրուկ չի պահել: Ուրեմն, երբ սկսէք վա-
յելել ձեր նոր դրութիւնը, միտքերդ բերէք,
որ դուք պարտական էք ձեր աղասութեան հա-
մար այդ բարեհոգի մարդուն, և այն սէրը, որ
ունէիք դէսլինա, այժմ ցոյց տուէք նրա ամսւս-
նուն և զաւակներին: Ամեն անդամ, երբ կընա-
յէք Եղբայր Թումի տնակի վրայ, մուքերդ բե-
րէք, որ այն տեղ անց էր կացնում շատ երե-
կոներ, կալուածի բոլոր կեցողներով շրջապա-
տած, այդ չափազանց բարի և ճշմարիտ Քրիս-
տոնեայ մարդը: Թող նա լինի ձեղ խրատական
օրինակ, որին հետևելով, դուք էլ կըլինիք ճշ-
մարտասէր, հաւատարիմ և բարեպաշտ քրիս-
տոնեայ:

Տեսն ՊԱՐԵՐ. Աներ պատմութիւնը այս տեղ
իսկ կըլերջանար, թէ որ միտքերդ չընկնէր խեղձ
Ելիզան և նրա փոքրիկ Հենրիկը: Տարակոյս

չուիմ, որ մեր ընթերցողքը ուրախութեամբ
կիմանան, որ այդ գորովալից մայրը, զանազան
փորձանքներից և արգելքներից յետոյ, գտաւ
վերջապէս իր ամուսնուն, որ նոյնպէս հաղար
ու մի վտանգների էր ենթարկուել իր ամուսինը
և որդին փնտռելով:

Այդ ընտանիքը հաստատեց իր բնակութիւնը
կանադայումը:

ԳԵՐԺ.

զետմիւնիւն զգացածները ունե ու այսուց
ապրանքը զբան քվավագուր քառ ու մասնաւոյն
առաջ շառակ լիզանց լիքայ և լիզանցանդրով
ուրբաշ ուրբաշ ու մասնան ով ուրբաշզի
ուրբաշն ով լիզանցանդր ով հիմնանուր ու

: Լոյնուածի միջրա և
լուսիթային ով լիզանցանդր ով լուսիթայի ու

: ունալու բանալ

ՑԱՆԿ

Յառաջաբանութիւն.

Առաջին առաւօտ.	Մայր և գերելաձառ.	28
Երկրորդ	» Եւանգելինէ	45
Երրորդ	» Օֆէլիա	58
Չորրորդ	» Թում և Եւանգելինէ	70
Վեցերորդ	» Թովսի	64
Ետքներորդ	» Եւայի և նրա հօր մահը	96

Ութերորդ առաւօտ. Կահատակութիւն.

դեռահաս պարոնը. ազատիչը.	106
--------------------------	-----

մայն տվալութեան

89.	առնելիք է և զանց առանու մեջառ
90.	ձեմք քանաք և բարեկան
91.	անկափ և բարեկան
92.	անկափ և բարեկան
93.	անկափ և բարեկան
94.	անկափ և բարեկան
95.	անկափ և բարեկան
96.	անկափ և բարեկան
97.	անկափ և բարեկան
98.	անկափ և բարեկան
99.	անկափ և բարեկան

ՀՀ Ազգային գրադարան



NL0585559

